

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՀՄԳԻԱ որոշում	2-3
Նախաբան	3-4
Գլուխ-1 Սահմանադրական Կարգի Հիմքը	4-6
Գլուխ-2 Մարդու եւ քաղաքացու հիմնարար իրաւունքներն ու ազատութիւնները	6-11
Գլուխ-3 Ազգային Ժողով	11-19
Գլուխ-4 Վտարանդի Կառավարութիւն	19-23
Գլուխ-5 Դատական Իշխանութիւն	23-28
Գլուխ -6 Դատախազութիւն	28
Գլուխ-7 Տարածքային կառուարում եւ տեղական ինքնակառուարում	29-30
Գլուխ-8 Սահմանադրութեան ընդունումը, փոփոխումը եւ հանրաքուէ	30-31
Գլուխ- 9 Անցումային դրոյթներ	31
Իրավարարներ	32
Հեղինակներ	33

ՈՐՈՇՈՒՄ

Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանի

Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանը  
Նախագահութեամբ իրաւարար Հրայր/Սուրիկ Ղազարեանի  
Անդամակցութեամբ իրաւարարներ՝

Արմէն Խաչիկեանի, Գառնիկ Սարգսեանի, Երուանդ Մանարեանի  
,,10,, դեկտեմբերի 2014թ.

ԱՄՆ, Լոս- Անջելէս, Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան

Հիմք ընդունելով Արեւմտեան Հայաստան Պետութեան Վտարանդի Կառավարութեան եւ  
Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանի որդեգրած սկզբունքները, այն է՝

ա/ Արեւմտեան Հայաստանի տարածքում եւ Արեւմտեան Հայաստան Պետութեան  
հովանու ներքոյ ստեղծել այնպիսի պետականութիւն, որը կապահովի այնտեղ ապրող  
իւրաքանչիւր անհատի ու քաղաքացու ազատ կենսագործունէութիւնն ու ներդաշնակ  
զարգացումը:

բ/ Որպէս քաղաքակրթական հենք եւ կամուրջ, արժեւորելով հայոց մշակութային  
ժառանգութիւնը, վերահաստատել եւ վերակերտել աւանդական հայոց  
արժեհամակարգը՝ յենուելով Առաքելականութեան, Լուսաւորչականութեան,  
Բանախօսութեան, Արիականութեան, Բարեպաշտութեան վրայ:

գ/ Բնօրրանում՝ Արեւմտեան Հայաստանում, բնաջնջումից հրաշքով փրկուած եւ  
աշխարհով մէկ սփռուած Արեւմտեան Հայաստանի հայերի նոր սերունդը,  
արտերկրների եւ Արեւմտեան Հայաստանի հայութեան քաղաքակրթական -  
պատմական առաքելութեամբ, բարոյական եւ իրաւական մասնակցութեամբ,  
Արեւմտեան Հայաստան պետութեան վերաստեղծման միջոցով իրականացնում ենք եւ  
իրաւական ընթացքի մէջ ենք դնում, ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրոյ Վիլսոնի կողմից  
սահմանազատած Հայաստան պետութեան քաղաքական գործընթացը եւ իրաւարար  
վճռի միջոցով հաստատում ենք Միասնական Հայաստան պետութիւն ունենալու Հայ  
Ժողովրդի անժամանցելի իրաւունքը:

դ/Միասնական Հայաստան պետութիւն ունենալու Հայ Ժողովրդի անժամանցելի  
իրաւունքի միջոցով, հայութեան եւ Արեւմտեան Հայաստանի հայերի եւ միւս  
ժողովրդների բարձրագոյն բնական իրաւունքները պաշտպանելու, կեանքի բոլոր  
ասպարեզներն արարչական եւ մարդկայնութեան օրէնքներով վերակերտելու,  
տարածաշրջանային քաղաքակրթութեան վերածնութեան մէջ մեր գործուն դերը  
վերահաստատելու համար.

ե/նկատի ունենալով Արեւմտեան Հայաստան Պետութեան պետական կառոյցների,  
ողջ հայութեան, մասնաւորապէս Արեւմտեան Հայաստանի հայութեան, նրա  
քաղաքացիների, նրանց իրաւունքների դէմ, ներքին եւ արտաքին հայադաւ ուժերի  
կողմից նետուած մարտահրաւերները, ինչպէս նաեւ ողջ իրաւայարաբերութիւնները  
իրաւունքի գերակայութեամբ օրէնսդրական դաշտում լուծելու հրամայականը.

զ/արեւմտեան Հայաստան Պետութեան Վտարանդի Կառավարութեան, Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանին ուղղուած դիմում- առաջարկը.

Եւ ղեկավարուելով Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանի մասին օրէնքի 57 հոդուածով, իրականացնելով Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր Ժողովի իր իրաւունքները Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանը

## **ՈՐՈՇԵՑ**

Ճանաչել ընդունուած Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադրութիւնը, հետեւեալ խմբագրութեամբ.

### **ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ**

**Ճանաչուել է  
Ընդունուած 10 ղեկտեմբերի 2014թ.  
ԱՀ Սահմանադիր Գերագոյն  
Իրաւարար Ատեանի որոշմամբ,  
իրականացնելով ԱՀ Սահմանադիր  
Ժողովի իր իրաւունքը:**

## **ՆԱԽԱԲԱՆ**

Արեւմտեան Հայաստան Պետութեան Վտարանդի Կառավարութիւնը եւ Սահմանադիր - Գերագոյն Իրաւարար Ատեանը Սահմանադրութեամբ հաստատում է.

ա/ Արեւմտեան Հայաստանի տարածքում եւ Արեւմտեան Հայաստան Պետութեան հովանու ներքոյ ստեղծել այնպիսի պետականութիւն, որը կապահովի այնտեղ ապրող իւրաքանչիւր անհատի ու քաղաքացու ազատ կենսագործունէութիւնն ու ներդաշնակ զարգացումը:

բ/ Որպէս քաղաքակրթական հենք եւ կամուրջ, արժեւորելով հայոց մշակութային ժառանգութիւնը, վերահաստատել եւ վերակերտել աւանդական հայոց արժեհամակարգը՝ յենուելով Առաքելականութեան, Լուսաւորչականութեան, Բանախօսութեան, Արիականութեան, Բարեպաշտութեան վրայ:

զ/ Բնօրրանում՝ Արեւմտեան Հայաստանում, բնաջնջումից հրաջքով փրկուած եւ աշխարհով մէկ սփռուած Արեւմտեան Հայաստանի հայերի նոր սերունդը, բարոյական եւ իրաւական մասնակցութեամբ արտերկրների եւ Արեւմտեան Հայաստանի հայութեան քաղաքակրթական - պատմական առաքելութիւնն իրականացնելու եւ Արեւմտեան Հայաստանի վերաստեղծումը իրաւական ընթացքի մէջ դնելու, Արեւմտեան Հայաստանի հայերի եւ միւս ժողովրդների բարձրագոյն բնական իրաւունքները պաշտպանելու, կեանքի բոլոր ասպարեզները արարչական եւ մարդկայնութեան օրէնքներով վերակերտելու, տարածաշրջանային քաղաքակրթութեան վերածնութեան մէջ մեր գործուն դերը վերահաստատելու համար, ընդունում է՝ Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադրութիւնը:

ԳԼՈՒԽ 1

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՔԵՐԸ

Յօդուած 1. Արեւմտեան Հայաստան Պետութիւնը (կրճատ՝ ԱՀՊ), արարչութեան եւ մարդկայնութեան օրէնքների, դրանցից բխող տարածաշրջանի ստեղծագործ եւ աշխարհաստեղծ քաղաքակրթութեան վերածնութեան գաղափարախօսութեան, ազգային եւ համամարդկային կենսակերպի, մշակոյթների բարձրագոյն արժէքները կրող՝ ազատ, անկախ, ինքնիշխան պետութիւն է՝ կառավարման աւանդական, համայնքային, հանրային եւ հանրապետական ձեւերի զուգակցումով:

Արեւմտեան Հայաստան Պետութեան անուանումը միջազգային ասպարեզում – State of Western Armenia, Государство Западная Армения.

Յօդուած 2. Արեւմտեան Հայաստան Պետութեան ինքնիշխանութիւնը տարածուում է առաջին հերթին Սեւրի՝ 1920թ.օգոստոսի 10-ի, պայմանագրով ճանաչուած եւ Վուդրոյ Վիլսոնի Իրաւարար վճռով ամրագրուած տարածքների վրայ, ինչպէս նաեւ Իրաւարար վճռից դուրս մնացած Արեւմտեան Հայաստանի երեք վիլայեթների եւ Կիլիկեան Հայաստանի վրայ:

**Յօդուած 3.** Արեւմտեան Հայաստան Պետութիւնը՝ ազատ, անկախ, ինքնիշխան, իրաւական, սոցիալական, ժողովրդավարական պետութիւն է:

Արեւմտեան Հայաստան Պետութեան անկախութեան, անվտանգութեան երաշխաւորը Սահմանադրութիւնն է եւ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրոյ Վիլսոնի, 1920թ. Նոյեմբերի 22-ին կայացրած, Իրաւարար Վճիռը:

**Յօդուած 4.** Արեւմտեան Հայաստան Պետութիւնը՝ մշտական, զինուած, դրական չէզոք պետութիւն է:

**Յօդուած 5.** Հայութեան պարտադրուած բռնագաղթը բնօրրան հայրենիքից սկսուել է

1700 տարի առաջ՝ 387 թուականին, երբ Հայաստանը առաջին անգամ բաժանուեց երկու մասի՝ Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանների: Այսուհետ, առաջիկայ 1700 տարիների ընթացքում, Հայաստան վերադառնալու, քաղաքացիութիւն ստանալու եւ հայրենիքում՝ Արեւմտեան Հայաստանում, վերահաստատուելու իրաւունք ունեն, առաջին հերթին, աշխարհով մէկ սփռուած հայերը եւ նրանց սերունդները:

**Յօդուած 6.** Արեւմտեան Հայաստան Պետութեան վերջնանպատակը հայութեան եւ Հայաստանի վերամիաւորումն է՝ Բնօրրան Հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում որպէս Հայաստան պետութեան :

**Յօդուած 7.** Արեւմտեան Հայաստան Պետութիւնը երաշխաւորում է իրաւունքի գերակայութիւնը, Սահմանադրութիւնը բարձրագոյն իրաւաբանական ուժ ունի, իրաւանորմերը կիրառուում են անմիջական:

**Յօդուած 8.** Սահմանադրութեանը հակասող իրաւանորմերը իրաւաբանական ուժ չունեն:

**Յօդուած 9.** Արեւմտեան Հայաստան Պետութեան, արեւմտահայութեան սեփականութեան իրաւունքը պաշտպանուում է Արեւմտեան Հայաստան Պետութեան կողմից:

Արեւմտեան Հայաստան Պետութեան ընդերքը, բնական պաշարները, ռազմավարական կառոյցները/կապ, տրանսպորտ, դպրոց, ԲՈՒՀ, առողջապահական հիմնարկները, հաղորդակցութեան ուղիներ /հանդիսանում են ազգային սեփականութիւն, մասնաւորեցման ենթակայ չեն:

**Յօդուած 10.** Տարածաշրջանի, Կիլիկիայի Հայկական պետութեան պատմամշա կոյթային արժէքները գտնուում են Արեւմտեան Հայաստան Պետութեան հոգածութեան եւ պաշտպանութեան ներքոյ:

**Յօդուած 11.** Արեւմտեան Հայաստան Պետութեան պետական լեզուն հայերենն է՝ դասական ուղղագրութեամբ /գրական արեւելահայերեն, գրական արեւմտահայերեն /, դրօշը քառագոյն, կառավարման ձեւը՝ խորհրդարանական-վարչապետական:

## Գ Լ ՈՒ Խ 2

### ՄԱՐԴՈՒ ԵՒ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**Յօդուած 12.** Արեւմտեան Հայաստան Պետութեան քաղաքացիութեան ձեռքբերման եւ դադարեցման կարգը սահմանուում է օրէնքով:

Ազգութեամբ հայերը Արեւմտեան Հայաստան Պետութեան քաղաքացիութիւն են ձեռք բերում պարզեցուած կարգով:

Արեւմտեան Հայաստան Պետութեան քաղաքացին միաժամանակ կարող է լինել նաեւ այլ պետութեան քաղաքացի:

**Յօդուած 13.** Քաղաքացիները, անկախ ազգութիւնից, ռասայից, սեռից, լեզուից,

դաւանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գոյքային կամ այլ դրուծիւնից, ունեն Մահմանադրութեամբ եւ օրէնքներով սահմանուած բոլոր իրաւունքները, ազատութիւնները եւ պարտականութիւնները:

**Յօդուած 14.** Բոլորը հաւասար են օրէնքի առջեւ եւ առանց խտրականութեան հաւասարապէս պաշտպանուում են օրէնքով:

**Յօդուած 15.** Իւրաքանչիւր ոք ունի կեանքի իրաւունք:

Մահապատիժը՝ մինչեւ դրա վերացումը, որպէս բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանուել օրէնքով՝ առանձնապէս ծանր յանցագործութիւնների համար:

**Յօդուած 16.** Իւրաքանչիւր ոք ունի ազատութեան եւ անձեռնմխելիութեան իրաւունք:

Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրէնքով սահմանուած կարգով: Նա կարող է կալանաւորուել միայն դատարանի որոշմամբ՝ օրէնքով սահմանուած կարգով:

**Յօդուած 17.** Մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատուութիւնը նուաստացնող վերաբերմունքի եւ պատժի:

Մարդուն չի կարելի առանց իր համաձայնութեան ենթարկել բժշկական կամ գիտական փորձերի:

**Յօդուած 18.** Իւրաքանչիւր ոք ունի իր անձնական եւ ընտանեկան կեանքը անօրինական միջամտութիւնից, իր պատիւը եւ բարի համբաւը ոտնձգութիւնից պաշտպանելու իրաւունք:

Արգելուում է մարդու անձնական եւ ընտանեկան կեանքի մասին տեղեկութիւնների ապօրինի հաւաքելը, պահելը, օգտագործելը եւ տարածելը:

Իւրաքանչիւր ոք ունի նամակագրութեան, հեռախօսային խօսակցութիւնների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիութեան իրաւունք, որը կարող է սահմանափակուել միայն դատարանի որոշմամբ:

**Յօդուած 19.** Իւրաքանչիւր ոք ունի բնակարանի անձեռնմխելիութեան իրաւունք:

Արգելուում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարանը՝ բացառութեամբ օրէնքով նախատեսուած դէպքերի:

Բնակարանը կարող է խուզարկուել միայն դատարանի որոշմամբ՝ օրէնքով սահմանուած կարգով:

**Յօդուած 20.** Իւրաքանչիւր քաղաքացի ունի Պետութեան տարածքում ազատ տեղաշարժուելու եւ բնակավայր ընտրելու իրաւունք:

Իւրաքանչիւր ոք ունի Արեւմտեան Հայաստան Պետութիւնից դուրս գալու իրաւունք:

Իւրաքանչիւր քաղաքացի ունի Արեւմտեան Հայաստան Պետութիւն վերադառնալու իրաւունք:

**Յօդուած 21.** Իւրաքանչիւր ոք ունի մտքի, խղճի եւ դաւանանքի ազատութեան իրաւունք:

Կրօնի եւ համոզմունքների արտայայտման ազատութիւնը կարող է սահմանափակուել միայն օրէնքով՝ Մահմանադրութեամբ նախատեսուած հիմքերով:

**Յօդուած 22.** Իւրաքանչիւր ոք ունի իր կարծիքը պնդելու իրաւունք:

Արգելուում է մարդուն հարկադրել հրաժարուել իր կարծիքից կամ փոխել այն:

Իրաքանչիւր ոք ունի խօսքի ազատութեան իրաւունք՝ ներառեալ տեղեկութիւններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատութիւնը տեղեկատուութեան ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

**Յօդուած 23.** Իրաքանչիւր ոք ունի այլ անձանց հետ միաւորումներ կազմելու, այդ թւում՝ արհեստակցական միութիւններ ստեղծելու եւ դրանց անդամագրուելու իրաւունք:

Իրաքանչիւր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կ'ուսակցութիւններ ստեղծելու եւ դրանց անդամագրուելու իրաւունք:

Այս իրաւունքները սահմանափակուած են զինուած ուժերում եւ իրաւապահ մարմիններում ծառայողների նկատմամբ:

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրուել որեւէ կուսակցութեան կամ միաւորման:

**Յօդուած 24.** Քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զէնքի ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու իրաւունք:

**Յօդուած 25.** Արեւմտեան Հայաստան Պետութեան տասնութ տարին լրացած քաղաքացիները ունեն անմիջականօրէն կամ կամքի ազատ արտայայտութեամբ ընտրուած, իրենց ներկայացուցիչների միջոցով, պետութեան կառավարմանը մասնակցելու իրաւունք:

Ընտրել եւ ընտրուել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչուած քաղաքացիները:

**Յօդուած 26.** Իրաքանչիւր ոք ունի սեփականութեան եւ ժառանգման իրաւունք:

Հողի սեփականութեան իրաւունքից չեն օգտուում օտարերկրեայ քաղաքացիները եւ քաղաքացիութիւն չունեցող անձինք՝ բացառութեամբ օրէնքով նախատեսուած դէպքերի: Սեփականութիւնից կարող է զրկել միայն դատարանը՝ օրէնքով նախատեսուած դէպքերում:

Սեփականութեան օտարումը հասարակութեան եւ պետութեան կարիքների համար կարող է կատարուել միայն բացառիկ դէպքերում, օրէնքի հիման վրայ՝ նախնական համարժէք փոխհատուցմամբ:

**Յօդուած 27.** Իրաքանչիւր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրութեան իրաւունք:

Իրաքանչիւր ոք ունի արդարացի եւ պետութեան կողմից սահմանուած նուազագոյնից ոչ ցածր աշխատավարձի, անվտանգութեան ու հիգիենայի պահանջները բաւարարող աշխատանքային պայմանների իրաւունք:

Քաղաքացիներն իրենց տնտեսական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանութեան նպատակով գործադուլի իրաւունք ունեն: Այս իրաւունքի իրականացման կարգը եւ սահմանափակումները սահմանուած են օրէնքով:

**Յօդուած 28.** Իրաքանչիւր ոք ունի հանգստի իրաւունք:

Առաւելագոյն աշխատաժամանակը, հանգստեան օրերը եւ ամենամեայ վճարովի արձակուրդի նուազագոյն տեւողութիւնը սահմանուած են օրէնքով:

**Յօդուած 29.** Իրաքանչիւր քաղաքացի ունի իր եւ իր ընտանիքի համար բաւարար

կենսամակարդակի, այդ թույլ՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրաւունք: Պետութիւնը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրաւունքի իրականացման համար:

**Յօդուած 30.** Ընտանիքը հասարակութեան բնական եւ հիմնական բջիջն է: Ընտանիքը, մայրութիւնը եւ մանկութիւնը գտնուում են հասարակութեան եւ պետութեան հովանաւորութեան ու պաշտպանութեան ներքոյ: Տղամարդն ու կինն ամուսնանալիս, ամուսնութեան ընթացքում, ամուսնալուծուելիս օգտուում են հաւասար իրաւունքներից:

**Յօդուած 31.** Իւրաքանչիւր քաղաքացի ունի ծերութեան, հաշմանդամութեան, հիւանդութեան, կերակրողին կորցնելու, գործազրկութեան եւ օրէնքով նախատեսուած այլ դէպքերում սոցիալական ապահովութեան իրաւունք:

**Յօդուած 32.** Իւրաքանչիւր ոք ունի առողջութեան պահպանման իրաւունք: Բժշկական օգնութեան եւ սպասարկման կարգը սահմանուում է օրէնքով: Արեւմտեան Հայաստան Պետութիւնում բժշկական սպասարկումը անվճար է: Պետութիւնն իրականացնում է բնակչութեան առողջութեան պահպանման ծրագրեր, նպաստում ֆիզկուլտուրայի եւ սպորտի զարգացմանը:

**Յօդուած 33.** Իւրաքանչիւր քաղաքացի ունի կրթութեան իրաւունք: Միջնակարգ կրթութիւնը պետական ուսումնական հաստատութիւններում պարտադիր է եւ անվճար: Իւրաքանչիւր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատութիւններում մրցութային հիմունքներով վճարովի բարձրագոյն եւ այլ մասնագիտական կրթութիւն ստանալու իրաւունք: Վճարը չի կարող գերազանցել, պետութեան կողմից սահմանուած, նուազագոյն աշխատավարձի կրկնապատիկը: Օտարերկրեայ քաղաքացիների, ուսման վարձը որոշուում է Բուհ-ի եւ կողմի փոխհամաձայնութեամբ՝ ըստ օրէնքի: Ոչ պետական ուսումնական հաստատութիւնների ստեղծման եւ գործունէութեան կարգը սահմանուում է օրէնքով:

**Յօդուած 34.** Իւրաքանչիւր ոք ունի գրական, գեղարուեստական, գիտական եւ տեխնիկական ստեղծագործութեան ազատութեան, գիտութեան նուաճումներից օգտուելու եւ հասարակութեան մշակութային կեանքին մասնակցելու իրաւունք: Մտաւոր սեփականութիւնը պաշտպանուում է օրէնքով:

**Յօդուած 35.** Ազգային փոքրամասնութիւններին պատկանող քաղաքացիներն ունեն իրենց աւանդոյթների պահպանման, լեզուի եւ մշակոյթի զարգացման իրաւունք:

**Յօդուած 36.** Իւրաքանչիւր ոք ունի իր իրաւունքները եւ ազատութիւնները օրէնքով չարգելուած բոլոր միջոցներով պաշտպանելու իրաւունք: Իւրաքանչիւր ոք ունի Սահմանադրութեամբ եւ օրէնքներով ամրագրուած իր իրաւունքների եւ ազատութիւնների դատական պաշտպանութեան իրաւունք:

**Յօդուած 37.** Իւրաքանչիւր ոք ունի իր խախտուած իրաւունքները վերականգնելու, ինչպէս նաև իրեն ներկայացուած մեղադրանքի հիմնաւորուածութիւնը պարզելու



համար հաւասարութեան պայմաններում, արդարութեան բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննութեան իրաւունք: Հանրութեան բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգութեան, կողմերի անձնական կեանքի կամ արդարադատութեան շահերի պաշտպանութեան նկատառումներով, լրատութեան միջոցների եւ հասարակութեան ներկայացուցիչների մասնակցութիւնը դատական քննութեան ընթացքում կամ նրա մի մասում կարող է արգելուել օրէնքով:

**Յօդուած 38.** Իւրաքանչիւր ոք ունի իրաւաբանական օգնութիւն ստանալու իրաւունք: Օրէնքով նախատեսուած դէպքերում իրաւաբանական օգնութիւնը ցոյց է տրուում անվճար:

Իւրաքանչիւր ոք ունի ձեռքբերելու, կալանաւորման կամ մեղադրանքի առաջա դրման պահից պաշտպան ունենալու իրաւունք:

Իւրաքանչիւր դատապարտեալ ունի օրէնքով սահմանուած կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման իրաւունք: Իւրաքանչիւր դատապարտեալ ունի ներման կամ նշանակուած պատիժը մեղմացնելու խնդրանքի իրաւունք: Տուժողին պատճառուած վնասի հատուցումը ապահովուում է օրէնքով սահմանուած կարգով:

**Յօդուած 39.** Յանցագործութեան համար մեղադրուողը համարուում է անմեղ, քանի դեռ նրա մեղաւորութիւնը ապացուցուած չէ օրէնքով սահմանուած կարգով՝ դատարանի օրինական ուժի մէջ մտած դատավճռով:

Մեղադրեալը պարտաւոր չէ ապացուցել իր անմեղութիւնը: Չփարատուած կասկածները մեկնաբանուում են յօգուտ մեղադրեալի:

**Յօդուած 40.** Մարդը պարտաւոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու եւ մերձաւոր ազգականների դէմ: Օրէնքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականութիւնից ազատուելու այլ դէպքեր:

Արգելուում է օրէնքի խախտմամբ ձեռք բերուած ապացույցների օգտագործումը:

Արգելուում է նշանակել աւելի ծանր պատիժ, քան կարող է կիրառուել յանցագործութեան պահին գործող օրէնքով:

Մարդուն չի կարելի յանցագործութեան համար մեղաւոր ճանաչել, եթէ արարքի պահին գործող օրէնքով այն յանցագործութիւն չի համարուել:

Պատասխանատուութիւն սահմանող կամ պատասխանատուութիւնը

խստացնող, ինչպէս նաեւ մարդու վիճակը վատթարացնող օրէնքը յետադարձ ուժ չունի:

**Յօդուած 41.** Սահմանադրութեամբ ամրագրուած իրաւունքները եւ ազատութիւնները սպառնիչ չեն եւ չեն կարող մեկնաբանուել որպէս մարդու եւ քաղաքացու այլ հանրաճանաչ իրաւունքների եւ ազատութիւնների բացառում:

**Յօդուած 42.** Սահմանադրութեամբ ամրագրուած մարդու եւ քաղաքացու հիմնական իրաւունքները եւ ազատութիւնները կարող են սահմանափակուել միայն օրէնքով, եթէ դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգութեան, հասարակական կարգի, հանրութեան առողջութեան ու բարքերի, այլոց իրաւունքների եւ ազատութիւնների, պատուի եւ բարի համբաւի պաշտպանութեան համար:

**Յօդուած 43.** Մարդու եւ քաղաքացու առանձին իրաւունքներ եւ ազատութիւններ,

բացառությամբ Սահմանադրության 15, 17, 18,37, 39-41- յօդուածներում նշուածների, կարող են օրէնքով սահմանուած կարգով ժամանակաւորապէս սահմանափակուել ռազմական դրութեան ժամանակ կամ Սահմանադրութեան նախատեսուած այլ դէպքերում:

**Յօդուած 44.** Իւրաքանչիւր ոք պարտաւոր է օրէնքով սահմանուած կարգով եւ չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

**Յօդուած 45.** Իւրաքանչիւր քաղաքացի պարտաւոր է օրէնքով սահմանուած կարգով մասնակցել Արեւմտեան Հայաստան Պետութեան պաշտպանութեանը:

**Յօդուած 46.** Իւրաքանչիւր ոք պարտաւոր է պահպանել Սահմանադրութիւնը եւ օրէնքները, յարգել այլոց իրաւունքները, ազատութիւնները եւ արժանապատուութիւնը: Արգելուում է իրաւունքների եւ ազատութիւնների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրօնական ատելութիւն բորբոքելու, բռնութիւն եւ պատերազմ քարոզելու նպատակով:

### Գ Լ ՈՒ Խ 3

#### ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

**Յօդուած 47.**

Արեւմտեան Հայաստան Պետութեան օրէնսդիր մարմինը՝ Ազգային Ժողովն է/կրճատ Խորհրդարան/:

Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովը ղեկավարում է Ազգային Ժողովի նախագահը:

Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի նախագահը միջպետական յարաբերութիւններում, ինչպէս նաեւ արարողակարգային յարաբերութիւններում ներկայացնում է Արեւմտեան Հայաստան Պետութիւնը, որպէս Պետութեան Գլուխ:

**Յօդուած 48.** Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի նախագահի թեկնածուին/ներին/ առաջադրում են Կառավարութիւնը, Ազգային Ժողովի խմբակցութիւնները, ինչպէս նաեւ ինքնառաջադրմամբ, Ազգային Ժողովի պատգամաւորների կազմից:

Ազգային Ժողովի նախագահն ընտրուում է Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի կողմից, հինգ տարի ժամկետով՝ փակ գաղտնի քուէարկութեամբ: Ազգային Ժողովի նախագահ կարող է ընտրուել երեսունհինգ տարին լրացած, Արեւմտեան Հայաստան Պետութեան քաղաքացի հանդիսացող/բացառությամբ, ազգային բարձր, հանրային հեղինակութիւն ունեցող/, ընտրական իրաւունք ունեցող, բարձրագոյն, նուազագոյնը մագիստրոսի եւ դրան հաւասարեցուած կրթութեամբ իւրաքանչիւր ոք:

Նոյն անձը չի կարող աւելի քան երկու անգամ ընտրուել Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի նախագահի պաշտօնում:

**Յօդուած 49.** Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի նախագահն ընտրուում է Սահմանադրութեամբ եւ օրէնքով սահմանուած կարգով: Պետութեան

Ազգային Ժողովի նախագահի ընտրութիւնն անցկացում է նրա լիազօրութիւնների աւարտից երեսուն օր առաջ:

ազգային Ժողովի նախագահ է ընտրում այն թեկնածուն, որին կողմ է քուէարկել բոլոր թեկնածուներին կողմ քուէարկած ընտրողների թուի որակեալ մեծամասնութիւնը՝ 3/4-ը: Եթէ քուէարկուել է երկուսից աւելի թեկնածու եւ նրանցից ոչ մէկին կողմ չեն քուէարկել անհրաժեշտ թուով ընտրողներ, ապա քուէարկութիւնից յետոյ՝ տասնչորսերորդ օրը, անցկացում է նախագահի ընտրութեան երկրորդ փուլ:

Ազգային Ժողովի նախագահի ընտրութեան երկրորդ փուլին կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քուէարկել առաւել թուով ընտրողներ: Երկրորդ փուլում Ազգային Ժողովի նախագահ է ընտրում այն թեկնածուն, որին կողմ են քուէարկել առաւել թուով ընտրողներ:

-Մէկ թեկնածու քուէարկուելու դէպքում նա ընտրում է, եթէ կողմ է քուէարկել քուէարկութեան մասնակիցների որակեալ մեծամասնութիւնը՝ 3/4-ը:

Եթէ Ազգային Ժողովի նախագահի ընտրութեան արդիւնքների վերաբերեալ Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանը գործ է ընդունում քննութեան, ապա որոշում պէտք է կայացնի դիմումը ստանալուց յետոյ՝ տասնօրեայ ժամկէտում, իսկ սոյն յօդուածով սահմանուած ժամկէտները հաշուում են դատարանի որոշումն ուժի մէջ մտնելու պահից:

Եթէ Ազգային Ժողովի նախագահ չի ընտրում, ապա նշանակում է նոր ընտրութիւն, իսկ քուէարկութիւնն անցկացում է նոր ընտրութիւն նշանակուելուց յետոյ՝ տասներորդ օրը:

Նոր կամ արտահերթ ընտրութեան միջոցով ընտրուած Ազգային Ժողովի նախագահը պաշտօնը ստանձնում է ընտրութիւնից յետոյ հինգերորդ օրը:

**Յօդուած 50.** Արեւմտեան Հայաստան Ազգային Ժողովի նախագահի թեկնածուներից մէկի համար անյաղթահարելի խոչընդոտներ առաջանալու դէպքում Ազգային Ժողովի նախագահի ընտրութիւնը յետաձգում է երկշաբաթեայ ժամկէտով: Անյաղթահարելի ճանաչուած խոչընդոտները չվերանալու դէպքում նշանակում է նոր ընտրութիւն, իսկ քուէարկութիւնն անցկացում է նշուած երկշաբաթեայ ժամկէտը լրանալուց յետոյ՝ քսաներորդ օրը:

Մինչեւ քուէարկութեան օրը թեկնածուներից մէկի մահուան դէպքում նշանակում է նոր ընտրութիւն, իսկ քուէարկութիւնն անցկացում է նոր ընտրութիւն նշանակելուց յետոյ՝ քառասուներորդ օրը:

**Յօդուած 51.** Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի նախագահի հրաժարականի, մահուան, լիազօրութիւնների կատարման անհնարինութեան կամ օրէնքով սահմանուած կարգով նրան պաշտօնանկ անելու դէպքերում նշանակում է Ազգային Ժողովի նախագահի արտահերթ ընտրութիւն, իսկ քուէարկութիւնն անցկացում է Ազգային Ժողովի նախագահի պաշտօնը թափուր մնալուց յետոյ՝ քառասուներորդ օրը:

**Յօդուած 52.** Ռազմական եւ արտակարգ դրութեան ժամանակ Ազգային Ժողովի նախագահի ընտրութիւն չի անցկացում: Ազգային Ժողովի նախագահը շարունակում է իր լիազօրութիւնների իրականացումը: Ռազմական կամ արտակարգ դրութեան աւարտից յետոյ՝ քառասուներորդ օրը, անցկացում է Ազգային Ժողովի նախագահի ընտրութիւն:

**Յօդուած 53.** Ազգային Ժողովի նախագահը պաշտօնը ստանձնում է օրէնքով սահմանուած կարգով՝ Ազգային Ժողովի, Վտարանդի Կառավարութեան եւ Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի յատուկ նիստում, ժողովրդին տրուած հետեւեալ երդմամբ.

«Ստանձնելով Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի նախագահի պաշտօնը՝ երդում եմ. անվերապահօրէն կատարել Սահմանադրութեան պահանջները՝ յարգել մարդու եւ քաղաքացու իրաւունքներն ու ազատութիւնները, ի փառս Արեւմտեան Հայաստան Պետութեան եւ ի բարօրութիւն Արեւմտեան Հայաստան Պետութեան ժողովրդի ու ողջ հայութեան»:

**Յօդուած 54.** Պետութեան Գլուխը

1) Հանդէս է գալիս յայտարարութիւններով, ընդունում է հրամանագրեր:

2) օրէնքով նախատեսուած դէպքերում ու կարգով, ստանալով Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի դրական եզրակացութիւնը , արձակում է Ազգային Ժողովը եւ նշանակում արտահերթ ընտրութիւն:

Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի բացասական եզրակացութեան դէպքում, Ազգային Ժողովը չի արձակուում:

3) Վտարանդի Կառավարութեան լիազօրութեամբ ներկայացնում է Արեւմտեան Հայաստան Պետութիւնը միջազգային յարաբերութիւններում:

-Առաջադրում է արտաքին քաղաքականութեան ընդհանուր ծրագիր.

-Կնքում է միջազգային պայմանագրեր.

-Որոնք Վտարանդի Կառավարութեան համաձայնութեամբ, Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանի դրական եզրակացութեան առկայութեան դէպքում, Ազգային Ժողովի վաւերացմանն է ներկայացնում եւ ստորագրում դրանց վաւերագրերը:

-Հաստատում, կասեցնում կամ չեղեալ է յայտարարում վաւերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:

4/Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահի առաջադրմամբ նշանակում եւ ազատում է մարզային, առաջին ատեանի դատարանների իրաւարարներին/դատաւորներին/, արդարադատութեան խորհրդի երեք իրաւաբան գիտնականներին:

5) Ընդունում է օտարերկրեայ պետութիւնների եւ միջազգային կազմակերպութիւնների դիւանագիտական ներկայացուցիչների հաւատարմագրերը եւ հետկանչագրերը,

6)Վտարանդի Կառավարութեան առաջարկութեամբ, Ազգային Ժողովի հաստատմամբ վաւերացնում է Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի Նախագահի նշանակումը,

7/ նշանակում է Գլխաւոր Դատախազին, Կենտրոնական Բանկի Նախագահին եւ Վերահսկիչ Պալատի Նախագահին:

8) Գլխաւոր Դատախազի առաջարկութեամբ նշանակում եւ ազատում է Գլխաւոր Դատախազի տեղակալներին

9) Օրէնքով սահմանուած կարգով լուծում է Արեւմտեան Հայաստան Պետութեան քաղաքացիութեան եւ քաղաքական ապաստան տալու հետ կապուած հարցերը:

10) Պարգեւատրում է Արեւմտեան Հայաստան Պետութեան շքանշաններով եւ մեդալներով, շնորհում բարձրագոյն, պատուաւոր կոչումներ եւ այլ դասային աստիճաններ:

11) Ներում է շնորհում դատապարտեալներին:

**Յօդուած 55** Ազգային Ժողովի Նախագահը

1/Ուղերձով դիմում է Ազգային Ժողովին.

2/Ազգային ժողովի ընդունած օրէնքը ստանալուց յետոյ՝ քսանօրեայ ժամկետում, ստորագրում եւ հրապարակում է այն.

3/Այդ ժամկետում կարող է Ազգային Ժողովի կողմից ընդունուած օրէնքն առարկութիւններով, առաջարկութիւններով վերադարձնել Ազգային Ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Հնգօրեայ ժամկետում ստորագրում եւ հրապարակում է Ազգային Ժողովի կողմից վերստին ընդունուած օրէնքը.

Ազգային Ժողովի կողմից կրկին ընդունուած օրէնքը, հնգօրեայ ժամկետում չստորագրելու դէպքում այդ օրէնքը համարւում է ընդունուած:

4) Ազգային Ժողովի յանձնաժողովներում որոշում է պատգամատրական տեղերի բաշխումը.

5/ Պատգամատրական խմբակցութիւնների, կոալիցիաների հետ խորհրդակցութիւնների հիման վրա որոշում է Ազգային Ժողովի կողմից առաջադրուող վարչապետի թեքնածուին,

6) Օրէնքով նախատեսուած դէպքերում նշանակումներ է կատարում պետական այլ պաշտօններում,

7) Կարող է կազմաւորել խորհրդակցական այլ մարմիններ:

**Յօդուած 56.** Արեւմտեան Հայաստան Պետութեան Գլխի հրամանագրերը, կարգադրութիւնները եւ յայտարարութիւնները, չեն կարող հակասել Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադրութեանը եւ օրէնքներին ու ենթակայ են կատարման Պետութեան ամբողջ տարածքում:

**Յօդուած 57.** Ազգային Ժողովի նախագահը՝ Պետութեան Գլուխն ունի թիկնագօր, նրա անձը պաշտպանուած է:

Ազգային Ժողովի նախագահը՝ Պպետութեան Գլուխն իր լիազօրութիւնների ժամկետում եւ դրանից յետոյ չի կարող հետապնդուել եւ պատասխանատուութեան ենթարկուել իր կարգավիճակից բխող, օրէնքով սահմանուած, գործողութիւնների համար:

Ազգային Ժողովի նախագահը՝ Պետութեան Գլուխը պատասխանատուութեան է ենթարկւում կատարած յանցագործութիւնների համար:

**Յօդուած 58.** Ազգային Ժողովի նախագահը՝ Պետութեան Գլուխը՝ կարող է պաշտօնանկ արուել կատարած յանցագործութեան համար:

Ազգային Ժողովի նախագահը՝ Պետութեան Գլխի պաշտօնանկ անելու հարցի մասին Վտարանդի Կառավարութեան կողմից ձեւաւորւում է յատուկ յանձնաժողով Վտարանդի Կառավարութեան եւ Ազգային Ժողովի հաւասար թուակազմով անդամներից, որն էլ եզրակացութիւն ստանալու համար պատուիրակների ընդհանուր թուի ձայների մեծամասնութեամբ ընդունուած որոշմամբ դիմում է Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեան:

Դրական եզրակացութեան դէպքում Իմպիչմենտային յատուկ յանձնաժողովը ձայների մեծամասնութեամբ, կայացնում է Ազգային Ժողովի նախագահի՝ Պետութեան Գլխի լիազօրութիւնները դադարեցնելու մասին որոշում:

Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի եզրակացութեամբ, եթէ Ազգային

Ժողովի նախագահին՝ Պետութեան Գլխին պաշտօնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանում է քննարկումից:

**Յօդուած 59.** Ազգային Ժողովի նախագահը՝ Պետութեան Գլխին իր հրաժարականը ներկայացնում է Ազգային Ժողով եւ Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանին: Հրաժարականը ներկայացնելուց յետոյ՝ տասնօրեայ ժամկետը լրանալուն պէս, երկօրեայ ժամկետում հրաժարականը կրկին ներկայացնելու դէպքում Ազգային Ժողովի նախագահի՝ Պետութեան Գլխի հրաժարականը համարում է ընդունուած, եւ Սահմանադրութեամբ սահմանուած կարգով ու ժամկետներում անցկացում է արտահերթ ընտրութիւն:

**Յօդուած 60.** Ազգային Ժողովի նախագահի՝ Պետութեան Գլխի ծանր հիւանդութեան կամ նրա լիազօրութիւնների կատարման համար այլ անյաղթահարելի խոչընդոտների առկայութեան դէպքերում, որոնք տեւականօրէն անհնարին են դարձնում նրա լիազօրութիւնների կատարումը, Ազգային Ժողովը Կառավարութեան առաջարկով եւ Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի եզրակացութեան հիման վրայ պատգամաւորների ընդհանուր թուի ձայների մեծամասնութեամբ որոշում է ընդունում Պետութեան Գլխի լիազօրութիւնների կատարման անհնարիւթեան մասին: Եթէ Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանը նման եզրակացութիւն չի տալիս, ապա հարցը հանում է Քննարկումից, սակայն Պետութեան Գլխի լիազօրութիւնները փոխանցում է Վարչապետին, դրա անհնարիւթեան դէպքում՝ Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի Նախագահին:

#### **Յօդուած 61.**

Սահմանադրութեան -59, 63, 69, 70, 74, 77, 78, 117-118 յօդուածներով նախատեսուած դէպքերում, ինչպէս նաեւ իր գործունէութեան կազմակերպման հարցերով Ազգային Ժողովն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում եւ հրապարակում է Ազգային Ժողովի նախագահը:

Ազգային Ժողովի լիազօրութիւնները սահմանում են Սահմանադրութեամբ: Ազգային Ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան:

**Յօդուած 62.** Ազգային Ժողովը կազմուած է 39 պատգամաւորից: Ազգային Ժողովի լիազօրութիւններն աւարտում են նրա ընտրութեանը յաջորդող հինգերորդ տարուայ դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը՝ նորընտիր Ազգային Ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը, երբ սկսում են նորընտիր Ազգային Ժողովի լիազօրութիւնները:

**Յօդուած 63.** Պատգամաւորը կարող է զբաղեցնել պետական այլ պաշտօն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, մինչեւ Արեւմտեան Հայաստան Պետութեան բիւջէի ձեւաւորումը եւ կառավարութեան կողմից վճարման չափի սահմանումը: Պատգամաւորի վարձատրութիւնը, գործունէութեան երաշխիքները սահմանում են օրէնքով:

**Յօդուած 64.** Պատգամաւորը կաշկանդուած չէ հրամայական մանդատով, առաջնորդում է իր խղճով եւ համոզմունքներով: Պատգամաւորը չի կարող հետապնդուել եւ պատասխանատուութեան ենթարկուել իր կարգավիճակից բխող գործողութիւնների, այդ թում՝ Ազգային Ժողովում յայտնած

կարծիքի համար, եթե այն զրպարտութիւն կամ վիրաւորանք չի պարունակում:

**Յօդուած 65.** Պատգամաւորի լիազօրութիւնները դադարում են Ազգային Ժողովի լիազօրութիւնների ժամկէտն աւարտուելու, Ազգային Ժողովի արձակման, Արեւմտեան Հայաստան Պետութեան քաղաքացիութիւնը կորցնելու, մէկ նստաշրջանի ընթացքում քուէարկութիւնների կէսից անյարգելի, իր մեղքով, բացակայելու, ազատագրկման դատապարտուելու, անգործունակ ճանաչուելու եւ հրաժարականի դէպքերում: Պատգամաւորների լիազօրութիւնների դադարման կարգը սահմանուում է Ազգային Ժողովի կանոնակարգով:

Խորհրդարանի աշխատանքների իրականացնողը եւ խորհրդարանի աշխատանք ներին պատգամաւորների մասնակցութեան ապահովման պատասխանատուն Ազգային Ժողովի նախագահն է:

**Յօդուած 66.** Ազգային Ժողովի հերթական ընտրութիւնն անցկացում է նրա լիազօրութիւնների աւարտին նախորդող վաթսուն օրուայ ընթացքում:

Ազգային Ժողովի ընտրութեան կարգը սահմանուում է օրէնքով:

Ընտրութիւնը նշանակուում է ԱՀՊ Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի որոշմամբ:

Նորընտիր Ազգային Ժողովի առաջին նստաշրջանը գումարուում է պատգամաւորների ընդհանուր թուի առնուազն երեք քարորդի ընտրութիւնից յետոյ՝ երկրորդ հինգշաբթի օրը:

Մինչեւ Ազգային Ժողովի նախագահի ընտրութիւնը, Ազգային Ժողովի նիստերը վարում է տարիքով աւագ պատգամաւորը:

**Յօդուած 67.** Ազգային Ժողովի հերթական նստաշրջանները գումարուում են տարեկան երկու անգամ՝

-Առաջին նստաշրջանը սկսում է յունուարի երկրորդ երկուշաբթի օրուանից մինչեւ հաստատուած օրակարգի աւարտը:

Առաջին նստաշրջանի աւարտից եւ հաշուետուութեան քննարկումից յետոյ գումարուում է երկրորդ նստաշրջանը:

-Երկրորդ նստաշրջանը սկսում է սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրուանից մինչեւ հաստատուած օրակարգի աւարտը:

Ազգային Ժողովի նիստերը դոնբաց են: Դոնփակ նիստ կարող է գումարուել Ազգային Ժողովի որոշմամբ ազգային անվտանգութեան հետ կապուած հարցերի քննարկման ժամանակ:

**Յօդուած 68.** Ազգային Ժողովի արտահերթ նստաշրջան գումարում է Ազգային Ժողովի նախագահի՝ պատգամաւորների ընդհանուր թուի առնուազն մէկ երրորդի, կամ Վտարանդի Կառավարութեան նախաձեռնութեամբ:

Ազգային Ժողովի արտահերթ նստաշրջանն անցկացում է նախաձեռնողի սահմանած օրակարգով:

Արտահերթ նստաշրջանը չի կարող տեւել վեց օրից աւելի:

**Յօդուած 69.** Սահմանադրաիրաւական օրէնքներն ընդունուում են հանրաքուէով:

Դրանց հաւասարեցուած օրէնքները ընդունուում են Ազգային Ժողովի

պատգամաւորների ընդհանուր թուի երեք քարորդ ձայների մեծամասնութեամբ:

**Յօդուած 70.** Ազգային ժողովում ստեղծուում են մշտական յանձնաժողովներ, իսկ անհրաժեշտութեան դէպքում՝ ժամանակաւոր յանձնաժողովներ:

Մշտական յանձնաժողովները ստեղծուում են օրէնքների նախագծերի եւ այլ առաջարկութիւնների նախնական քննարկման եւ դրանց վերաբերեալ Ազգային ժողովին եզրակացութիւններ տալու համար:

Ժամանակաւոր յանձնաժողովները ստեղծուում են առանձին օրէնքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձութիւնների եւ փաստերի մասին, Ազգային ժողովին եզրակացութիւններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

**Յօդուած 71.** Նորընտիր Ազգային ժողովն ընդունուում է Վտարանդի Կառավարութեան հրաժարականը Ազգային ժողովի առաջին նիստում:

Ազգային ժողովի կողմից Վտարանդի Կառավարութեան հրաժարականի ընդունումից յետոյ, Վտարանդի Կառավարութեան անդամները շարունակուում են իրենց պարտականութիւնների կատարումը մինչեւ նոր Վտարանդի Կառավարութեան կազմաւորումը:

Վտարանդի Կառավարութիւնը նորընտիր Ազգային ժողովի կամ իր կազմաւորումից յետոյ քսանօրեայ ժամկետում Ազգային ժողովի հաւանութեանն է ներկայացնում իր գործունէութեան ծրագիրը՝ Ազգային ժողովի նիստում դնելով իր վստահութեան հարցը: Վտարանդի Կառավարութեանն անվստահութիւն յայտնելու մասին որոշման նախագիծ կարող է ներկայացուել պատգամաւորների ընդհանուր թուի առնուազն երկու երրորդի կողմից՝ վստահութեան հարցը դնելուց քսանչորս ժամուայ ընթացքում:

Վտարանդի Կառավարութեանն անվստահութիւն յայտնելու մասին որոշման նախագիծը քուէարկութեան է դրուում այն ներկայացուելուց ոչ շուտ, քան քառասունութ եւ ոչ ուշ, քան եօթանասուներկու ժամուայ ընթացքում: Որոշումն ընդունուում է պատգամաւորների ընդհանուր թուի ձայների երեք քառորդով:

Վտարանդի Կառավարութեանն անվստահութիւն յայտնելու մասին որոշման նախագիծ չներկայացուելու կամ նման որոշում չընդունուելու դէպքում, նրա գործունէութեան ծրագիրը համարուում է հաւանութեան արժանացած:

Անվստահութիւն յայտնելու մասին որոշում ընդունուելու դէպքում Վարչապետը Ազգային ժողովին դիմում է ներկայացնում Վտարանդի Կառավարութեան հրաժարականի մասին:

### **Յօդուած 72**

Անցումային ժամանակահատուածում Վարչապետի հրաժարականը եւ տեղի թափուր մնալը Վտարանդի Կառավարութեան հրաժարականի հիմք չէ:

**Յօդուած 73.** Ազգային ժողովում օրէնսդրական նախաձեռնութեան իրաւունքը պատկանում է պատգամաւորական խմբին եւ Վտարանդի Կառավարութեանը:

Վտարանդի Կառավարութիւնը սահմանում է իր ներկայացրած օրէնքների նախագծերի քննարկման յաջորդականութիւնը եւ կարող է պահանջել, որ դրանք քուէարկութեան դրուեն միայն իր համար ընդունելի ուղղումներով:

Վտարանդի Կառավարութեան որոշմամբ անյետաձգելի համարուող օրէնքի նախագիծը Ազգային ժողովը քննարկում եւ քուէարկում է մէկամսեայ ժամկետում:

Պետութեան եկամուտները նուազեցնող կամ ծախսերն աւելացնող օրէնքների նախագծերը Ազգային ժողովը քննարկում է միայն Վտարանդի Կառավարութեան եզրակացութեամբ եւ ընդունում պատգամաւորների ընդհանուր թուի ձայների երեք քառորդ մեծամասնութեամբ:



**Յօդուած 74.** Ազգային Ժողովը Վտարանդի Կառավարութեան ներկայացմամբ հաստատում է պետական բիջէն:

Մինչեւ բիջէտային տարուայ սկիզբը պետական բիջէն չհաստատուելու դէպքում, ծախսերը կատարուում են նախորդ տարուայ բիջէի համամասնութիւններով: Պետական բիջէի քննարկման եւ հաստատման կարգը սահմանուում է օրէնքով:

**Յօդուած 75.** Ազգային Ժողովը վերահսկողութիւն է իրականացնում պետական բիջէի կատարման, ինչպէս նաեւ օտարերկրեայ պետութիւններից եւ միջազգային կազմակերպութիւններից ստացուած փոխառութիւնների եւ վարկերի օգտագործման նկատմամբ:

Ազգային Ժողովը պետական բիջէի կատարման մասին տարեկան հաշուետուութիւնը քննարկում եւ հաստատում է Ազգային Ժողովի վերահսկիչ պալատի եզրակացութեան առկայութեամբ:

**Յօդուած 76.** Վտարանդի Կառավարութեան գործունէութեան ծրագրի օրէնսդրական ապահովման նպատակով Ազգային Ժողովը կարող է լիազօրել Վտարանդի Կառավարութեանը՝ ընդունել օրէնքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային Ժողովի կողմից սահմանուած ժամկետում եւ չեն կարող հակասել օրէնքներին:

**Յօդուած 77.** Ազգային Ժողովի ընթացիկ նիստերը վարում է Պետութեան Գլխի կողմից, պատգամաւորների թուից նշանակուած անձը, որը իրականացնում է խօսնակի լիազօրութիւններ:

**Յօդուած 78.** Պատգամաւորներն իրաւունք ունեն հարցերով դիմել Վտարանդի Կառավարութեանը: Հերթական նստաշրջանի իւրաքանչիւր շաբաթուայ մէկ նիստում Վարչապետը եւ Վտարանդի Կառավարութեան անդամները պատասխանում են պատգամաւորների հարցերին:

Պատգամաւորների հարցերի կապակցութեամբ Ազգային Ժողովը որոշումներ չի ընդունում:

**Յօդուած 79** Ազգային Ժողովը.

1) յայտարարում է համաներում.

2) վաւերացնում կամ չեղեալ է յայտարարում Արեւմտեան Հայաստան Պետութեան միջազգային պայմանագրերը: Ազգային Ժողովի վաւերացմանը ենթակայ միջազգային պայմանագրերի շրջանակը սահմանուում է օրէնքով.

3) Յայտարարում է իր դրական զինուած չեզոքութեան մասին եւ յայտարարում է ակտիւ պաշտպանութիւն.

**Յօդուած 80.** Ազգային Ժողովը պատգամաւորների ընդհանուր թուի ձայների երկու երրորդով իմպիչմենտի միջնորդութիւն է յարուցում Ազգային Ժողովի նախագահին՝ Պետութեան Գլխին, անվստահութիւն է յայտնում Վտարանդի Կառավարութեանը եւ վարչապետին, այն ներկայացնելով իմպիչմենտային յանձնաժողով: Այդ իրաւունքից չի կարող օգտուել ռազմական դրութեան ժամանակ եւ դրան հաւասարեցուած, Սահմանադրութեանմբ նախատեսուած դէպքերում:

## ՎՏԱՐԱՆՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՒՆ

**Յօդուած 81.** Արեւմտեան Հայաստան Պետութեան գործադիր իշխանութիւնը իրականացնում է Արեւմտեան Հայաստան Պետութեան Վտարանդի Կառավարութիւնը/կրճատ Կառավարութիւն/:

Վտարանդի Կառավարութիւնը կազմուած է Վարչապետից, փոխ վարչապետներից, նախարարներից, ԱՀ Ազգային Բաց Ակադեմիայի նախագահից:

Վտարանդի Կառավարութեան բարձրագոյն պաշտօնեան Վարչապետն է՝ Նա ընտրուում է սոյն Սահմանադրութեան 48-59 յօդուածներով սահմանուած կանոններով:

-Նա Արեւմտեան Հայաստան Պետութեան զինուած ուժերի Գերագոյն Գլխաւոր հրամանատարն է.

-Արեւմտեան Հայաստան Պետութեան անկախութեան, անվտանգութեան ապահովման, Սահմանադրական կարգի պահպանման երաշխաւորն է:

Վտարանդի Կառավարութեան լիազօրութիւնները սահմանուում են Սահմանադրութեամբ եւ օրէնքներով, կանոնակարգ իրաւական նորմատիւ աւտերով, ինչպէս նաեւ սովորոյթային «գործառնական նորմերով»:

Վտարանդի Կառավարութեան կառուցուածքը եւ գործունէութեան կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանուում է վտարանդի Կառավարութիւնը.

Վտարանդի Կառավարութեան կազմը հաստատուում է Ազգային Ժողովը տասնօրեայ ժամկէտում, չհաստատելու դէպքում, Վտարանդի Կառավարութեան նոր կազմը քննարկուում է հնգօրեայ ժամկէտում եւ ներկայացուում է Ազգային Ժողովին, որը եռօրեայ ժամկէտում ենթակայ է հաստատման:

Ազգային Ժողովը պարտաւոր է հաստատել Վտարանդի Կառավարութիւնը երկրորդ քննարկումից յետոյ :

Երկրորդ քննարկումից յետոյ չհաստատելու դէպքում այն հաստատուում է Վտարանդի Կառավարութեան որոշմամբ:

**Յօդուած 82.** Վտարանդի Կառավարութեան նիստերը հրաւիրուում եւ վարուում է վարչապետը, կամ նրա յանձնարարութեամբ՝ նաեւ բացակայութեան, տեղը թափուր մնալու դէպքում՝ փոխ-վարչապետը, կամ նրա պարտականութիւնները կատարող անձը, ինչպէս նաեւ Վտարանդի Կառավարութեան անդամ նախարարը:

Վտարանդի Կառավարութեան որոշումները ստորագրուում եւ վաւերացնում է Վարչապետը, իսկ նրա բացակայութեան դէպքում նրա պարտականութիւնները կատարող պաշտօնեան:

սահմանադրութեամբ եւ օրէնքներով նախատեսուած դէպքերում, Վտարանդի Կառավարութեան անդամի/ների/ պահանջով Վարչապետը հրաւիրուում է Վտարանդի Կառավարութեան արտահերթ նիստ եւ նախագահուում այն:

**Յօդուած 83.** Վտարանդի Կառավարութեան գործունէութիւնը ղեկավարուում է Վարչապետը եւ համակարգում նախարարների, ԱՀ Ազգային Բաց Ակադեմիայի նախագահի, կառավարութեան կազմում այլ կառոյցների աշխատանքները:

Վարչապետն ընդունում է որոշումներ, հրամաններ, անում է գրաւոր եւ բանաւոր յայտարարութիւններ, կարգադրութիւններ, որոնց կատարումը պարտադիր է:

**Դիմում է Վտարանդի Կառավարութեանը.**

1/Օրէնսդրական նախաձեռնութեամբ, օրէնքի նախագծի փաթեթ Ազգային Ժողով ներկայացնելու համար,

2/Վտարանդի Կառավարութեան անդամին ազատելու, նոր անդամ նշանակելու առաջարկութեամբ,

3/Վաւերացնում է Վտարանդի Կառավարութեան որոշումները,

4/Խրախուսում եւ շնորհում է պարգէներ,

5/Կարգապահական պատասխանատուութեան է ենթարկում Վտարանդի Կառավարութեան անդամներին;

6/Շնորհում է կ'ոչումներ, դասային աստիճաններ, միջնորդում է Վտարանդի Կառավարութեանը, շնորհելու բարձրագոյն կ'ոչումներ, դասային աստիճաններ, որակաւորման դասեր:

7/Նշանակում է ներկայացուցիչներ, դեսպաններ եւ նրանց հաւասարեցուած պաշտօնատար անձանց, ինչպէս նաեւ հետ է կանչում նրանց,

8/Նշանակում եւ ազատում է փոխնախարարների, Վտարանդի Կառավարութեան , աշխատակազմում՝ վարչութեան պետերին,

9/Բիւջէի կատարման, տնտեսութեան վիճակի մասին տարեկան, նաեւ արտահերթ հաշուետուութեամբ հանդէս է գալիս Վտարանդի Կառավարութիւնում եւ Ազգային Ժողովում,

10/Վաւերացնում է Ազգային Ժողովի կողմից համապատասխանաբար չընդունուած օրինագծերը, դրանք վեցամսեայ ժամկետում փոփոխութիւններով Ազգային Ժողով ներկայացնելու պայմանով,

11/Պետութեան Գլխին արձակուրդի, լիազօրութիւնների իրականացման անհնարինութեան դէպքում, իրականացնում է Պետութեան Գլխի լիազօրութիւնները,

12/Միջպետական յարաբերութիւններում ներկայացնում է պետութիւնը:

Կնքած պայմանագրերն ու արձանագրութիւնները հաստատման է ներկայացնում Ազգային Ժողովին,

13/Վտարանդի Կառավարութեան կողմից առաջադրուած եւ Ազգային Ժողովի կողմից մերժուած օրինագծերի համար ներկայացնում է առարկութիւններ եւ հիմնաւորումներ,

14/ Վտարանդի Կառավարութեան անունից միջնորդում է Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեան եզրակացութիւն ստանալու, Ազգային Ժողովը ցրելու համար,

15/Վտարանդի Կառավարութեան համաձայնութեամբ եւ անունից, Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեան, իմպիչմենտ է յայտնում Ազգային Ժողովի նախագահին՝ Պետութեան Գլխին:

16/Մինչեւ Պետութեան Գլխի ընտրուելը կայացնում է հրամանագրեր:

**Յօդուած 84.** Մինչեւ, սահմանուած կարգով , Վտարանդի Կառավարութեան անդամին ամենամսեայ աշխատավարձի վճարումը Վտարանդի Կառավարութեան անդամը կարող է լինել, որեւէ ներկայացուցչական մարմնի անդամ, զբաղեցնել պետական այլ պաշտօն կամ կատարել այլ վճարովի աշխատանք:

**Յօդուած 85.** Վտարանդի Կառավարութիւնը՝

1) Սահմանադրութեամբ, օրէնքով եւ կանոնակարգ նորմատիւ ակտերով

նախատեսուած կարգով Ազգային Ժողովի հաւանութեանն է ներկայացնում իր գործունէութեան ծրագիրը.

2) Ազգային Ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բիջէի նախագիծը, ապահովում բիջէի կատարումը, որի վերաբերեալ հաշուետուութիւն է ներկայացնում Ազգային Ժողովին.

3) Կառավարում է պետական սեփականութիւնը եւ իրեն յանձնուած գոյքը.

4) Ապահովում է ֆինանսատնտեսական, վարկային եւ հարկային միասնական պետական քաղաքականութեան իրականացումը.

5) Ապահովում է պետական քաղաքականութեան իրականացումը գիտութեան, կրթութեան, մշակոյթի, առողջապահութեան, սոցիալական ապահովութեան եւ բնութեան պահպանութեան բնագաւառներում.

6) Իրականացնում է Պետութեան պաշտպանութեան, արտաքին եւ ներքին քաղաքականութեան, ինչպէս նաեւ ազգային անվտանգութեան, արտաքին յարաբերութիւնների ձեւաւորման գործառոյթները:

Ապահովում է նիւթատեխնիկական բազան եւ անհրաժեշտութեան դէպքում իրականացնում է օրէնքով, կամ այլ նորմատիւային փաստաթղթերով նախատեսուած ինքնուրոյն քաղաքականութիւն:

7) Միջոցներ է ձեռնարկում օրինականութեան ամրապնդման, քաղաքացիների իրաւունքների եւ ազատութիւնների ապահովման, սեփականութեան եւ հասարակական կարգի պահպանման ուղղութեամբ:

8/Կառավարութիւնը հանդէս է գալիս օրէնսդրական նախաձեռնութեամբ: Ազգային Ժողով Վտարանդի Կառավարութեան կողմից ներկայացնուած օրէնսդրական նախագծերը, քննարկուում են Վտարանդի Կառավարութեան համաձայնութեամբ:

9/ Ազգային Ժողովի կողմից, Վտարանդի Կառավարութեան առաջադրուած, սակայն չընդունուած օրէնսդրական նախագծերը, Վտարանդի Կառավարութիւնը վերցնում է գործադիր շրջանառութեան մէջ՝ Վարչապետի որոշմամբ:

Վարչապետի որոշմամբ գործադիր շրջանառութեան մէջ դրուած օրէնքները Ազգային Ժողովի կողմից պէտք է ընդունուեն երեք ամսեայ ժամկէտում:

10/Վտարանդի Կառավարութեան որոշմամբ շնորհուում է բարձրագոյն կոչումներ, դասային աստիճաններ, որակաւորման դասեր եւ պատուաւոր կոչումներ:

11/Պետութեան վրայ զինուած յարձակման, դրա անմիջական վտանգի առկայութեան կամ պատերազմ յայտարարուելու դէպքերում յայտարարում է ռազմական դրութիւն եւ կարող է յայտարարել ընդհանուր կամ մասնակի զօրահաւաք եւ որոշում է ընդունում զինուած ուժերի օգտագործման մասին:

12/Զինուած ուժերի օգտագործման կամ ռազմական դրութիւն յայտարարուելու դէպքերում իրաւունքի ուժով անյապաղ գումարում է Վտարանդի Կառավարութեան եւ Ազգային Ժողովի համատեղ յատուկ նիստ: Ռազմական դրութեան իրաւական ռեժիմը սահմանուում է օրէնքով:

13/Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Վտարանդի Կառավարության եւ Ազգային Ժողովի հետ, յայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրուող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

14/Արտակարգ դրություն յայտարարելու դեպքում իրաւունքի ուժով անյապաղ գումարում է Վտարանդի Կառավարության եւ Ազգային Ժողովի համատեղ յատուկ նիստ:

Արտակարգ դրութեան իրաւական ռեժիմը սահմանում է օրէնքով.

15/Նշանակում, ազատում է կառավարութեան անդամներին:

**Յօդուած 86.** Վտարանդի Կառավարութիւնը պետական բիւջէի նախագիծը Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացնում բիւջետային տարին սկսուելուց առնուազն երեսուն օր առաջ եւ կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունուած ուղղումներով քուէարկութեան դրուի մինչեւ այդ ժամկէտի աւարտը:

Բիւջէի հաստատման առնչութեամբ կառավարութիւնը կարող է դնել իր վստահութեան հարցը: Եթէ Ազգային Ժողովը Սահմանադրութեան եւ օրէնքներով նախատեսուած կարգով Վտարանդի Կառավարութեանն անվստահութիւն չի յայտնում, ապա պետական բիւջէն Վտարանդի Կառավարութեան կողմից ընդունուած ուղղումներով համարում է հաստատուած: Բիւջէի հաստատման առնչութեամբ Ազգային Ժողովի կողմից Վտարանդի Կառավարութեանն անվստահութիւն յայտնելու դեպքում նոր Վտարանդի Կառավարութիւնը Ազգային Ժողովին բիւջէի նախագիծ է ներկայացնում քսանօրուայ ընթացքում, որը քննարկում եւ հաստատում է սոյն յօդուածով նախատեսուած կարգով՝ երեսուն օրուայ ընթացքում:

Սոյն իրաւանորմը կիրարկում է, միայն Ազգային Բանկի ձեւաւորումից եւ Ազգային Ժողովի կողմից առաջին պետական բիւջէի հաստատումից յետոյ:

## ԳԼՈՒԽ 5

### ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

**Յօդուած 87.** Արեւմտեան Հայաստան Պետութիւնում արդարադատութիւնն իրականացնում են միայն Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանը/կրճատ Ատեան/ եւ Դատարանները՝ Սահմանադրութեանը եւ օրէնքներին համապատաս խան: Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանի եւ դատարանների վերջնական ակտերն ընդունում են Արեւմտեան Հայաստան Պետութեան անունից:

**Յօդուած 88.** Արեւմտեան Հայաստան Պետութիւնում գործում են առաջին ատեանի՝ տեղական, մարզային՝ երկրորդ ատեանի՝ մարզային դատարանները եւ Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանը, իսկ օրէնքով նախատեսուած դեպքերում՝ նաեւ մասնագիտացուած դատարաններ:

Արեւմտեան Հայաստան Պետութեան բարձրագոյն իրաւարար/դատական/ ատեանը, Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանն է, որը կոչուած է ապահովելու նաեւ օրէնքի ճիշտ եւ միատեսակ կիրառութիւնը:

Արտակարգ դատարանների ստեղծումն արգելուած է:

**Յօդուած 89.** Արեւմտեան Հայաստան Պետութեան սահմանադրական արդարադատութիւնն իրականացնում է Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանը:

**Յօդուած 90.** Ատեանի եւ դատարանների անկախութիւնը երաշխաւորում է Սահմանադրութեամբ եւ օրէնքներով:

Ատեանի եւ դատարանների լիազօրութիւնները, կազմաւորման ու գործունէութեան կարգը սահմանում են Սահմանադրութեամբ եւ օրէնքներով:

Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի լիազօրութիւններն ու կազմաւորման կարգը սահմանում են Սահմանադրութեամբ, իսկ գործունէութեան կարգը սահմանում է Սահմանադրութեամբ եւ Սահմանադիր- Գերագոյն Իրաւարար Ատեանի մասին օրէնքով:

**Յօդուած 91.** Արեւմտեան Հայաստանի Սահմանադիր - Գերագոյն Իրաւարար Ատեանի իրաւարարներն, արդարադատութեան խորհրդի առաջադրմամբ, ընտրւում են Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի կողմից ձայների որակեալ մեծամասնութեամբ:

Կառավարութեան առաջադրմամբ, Իրաւարար Ատեանի հաւանութեամբ, Սահմանադիր - Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահին հաստատում է Ազգային Ժողովը, վաւերացնում է Պետութեան Գլուխը:

**Յօդուած 92.** Սահմանադիր - Գերագոյն Իրաւարար Ատեանին կից գործում է արդարադատութեան խորհուրդ, որը կազմաւորւում է, Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի կողմից կազմակերպուած, ընտրութեամբ, երկուական դատաւոր իւրաքանչիւր ատեանից երեք տարի ժամկէտով եւ երեք իրաւաբան գիտնականներից, որոնց նշանակում է Ազգային Ժողովի նախագահը երեք տարի ժամկէտով: Արդարադատութեան խորհրդում նախագահում են իրաւաբան գիտնականները փոխարկման /ոտտացիա/ կարգով, իւրաքանչիւր տարին մէկ:

Արդարադատութեան խորհուրդը օրէնքով սահմանուած կարգով`

1) Կազմում եւ Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատաւորների թեկնածութիւնների ցուցակը եւ դատաւորների ծառայողական առաջխաղացման ցուցակները,

2) Եզրակացութիւն է տալիս ներկայացուած դատաւորների թեկնածութիւնների վերաբերեալ.

3) Պետութեան Գլխի հարցմամբ կարծիք է յայտնում ներման հարցերի վերաբերեալ.

4) Իրաւարարներին- դատաւորներին կարգապահական պատասխանատուութեան ենթարկելու առաջարկ է ներկայացնում Արեւմտեան Հայաստանի Սահմանադիր - Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահին` իրաւարարի-դատաւորի լիազօրութիւնները դադարեցնելու մասին, իրաւարարին-դատաւորին կալանաւորելու, նրան` որպէս մեղադրեալ ներգրաւելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատուութեան ենթարկելու համաձայնութիւն տալու մասին:

**Յօդուած 93.** Իրաւարարն-արբիտրը, դատաւորն/ անփոփոխելի է: Իրաւարարը-

արբիտրները, դատաւորը պաշտօնավարում է 35 մինչեւ 60, իսկ Սահմանադիր-  
Գերագոյն Իրաւարար Ատեանի իրաւարարը/արբիտրը, դատաւորը/ պաշտօնավարում է  
մինչեւ 75 տարին լրանալը: Նրա լիազօրութիւնները դադարեցում են միայն  
Սահմանադրութեամբ եւ օրէնքով նախատեսուած դէպքերում ու կարգով:  
Սահմանադիր- Գերագոյն Իրաւարար Ատեանի պալատների նախագահները, մարզային  
եւ շրջանային-քաղաքային դատարանների նախագահները, նախագահի պաշտօնում  
պաշտօնավարում են փոխարկման (ռոտացիայի) կարգով, տարին մէկ փոփոխելով:

**Յօդուած 94.** Արդարադատութիւն իրականացնելիս իրաւարարը/արբիտրը,  
դատաւորը/անկախ է, ենթարկում է միայն Սահմանադրութեանը եւ օրէնքին:  
Իրաւարարի/արբիտրի, դատաւորի/ գործունէութեան երաշխիքները եւ  
պատասխանատուութեան հիմքերն ու կարգը սահմանում են Սահմանադրութեամբ եւ  
օրէնքով:

Իրաւարարը/արբիտրը, դատաւորը/ չի կարող կալանաւորուել, ներգրաւուել որպէս  
մեղադրեալ, ինչպէս նաեւ նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական  
պատասխանատուութեան ենթարկելու հարց յարուցել՝ առանց Սահմանադիր-  
Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահութեան համաձայնութեան:

Իրաւարարը/արբիտրը, դատաւորը/ չի կարող ձերբակալուել, բացառութեամբ այն  
դէպքերի, երբ ձերբակալումն իրականացում է յանցագործութեան կատարման պահին  
կամ անմիջապէս դրանից յետոյ: Նման դէպքերում ձերբակալման մասին անմիջապէս  
տեղեկացում են Պետութեան Գլուխը եւ Սահմանադիր- Գերագոյն Իրաւարար Ատեանի  
նախագահը:

**Յօդուած 95.** Իրաւարարը/արբիտրը, դատաւորը/ Արեւմտեան Հայաստան Պետութեան  
կառավարութեան կողմից սահմանուած աշխատավարձի ստացումից յետոյ չի կարող  
զբաղուել ձեռնարկատիրական գործունէութեամբ, զբաղեցնել իրենց  
պարտականութիւնների հետ չկապուած պաշտօն՝ պետական կամ տեղական  
ինքնակառավարման մարմիններում, առեւտրային կազմակերպութիւններում,  
կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ  
ստեղծագործական աշխատանքից:

Իրաւարարը/արբիտրը, դատաւորը/ չի կարող լինել որեւէ կուսակցութեան անդամ կամ  
զբաղուել քաղաքական գործունէութեամբ:

**Յօդուած 96.** Սահմանադիր- Գերագոյն Իրաւարար Ատեանը կազմուած է՝

Պետաիրաւական /սահմանադրական/,

Քաղաքացիաիրաւական,

Քրէաիրաւական, պալատներից,

Նախագահութիւնից,

Բարձրագոյն Ատեանից:

**Յօդուած 97.** Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի Բարձրագոյն Ատեանի  
անդամներն են Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահը, Իրաւարար  
Ատեանի պալատների նախագահները, Արեւմտեան Հայաստան Պետութեան  
Դատախազը, Արդարադատութեան նախարարը, Իրաւապաշտպանը:

Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի Նախագահութեան՝ կազմն է  
Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահը եւ պալատների  
նախագահները:

Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի, նախագահութեան, Բարձրագոյն Ատեանի անդամները բացարկման ենթակայ չեն:

**Յօդուած 98.** Բարձրագոյն Ատեանում նիստը նախագահում է Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահը, պետական շահերը պաշտպանում է Գլխաւոր Դատախազը, Պաշտպանութիւնն իրականացնում է Արեւմտեան Հայաստան Պետութեան մարդու իրաւունքների պաշտպանը:

Օրէնքների սահմանադրականութեան հարցերով՝ զեկուցում է պետաիրաւական/ սահմանադրական/պալատի նախագահը:

Քաղաքացիաիրաւական եւ Վարչաիրաւական գործերով զեկուցում է քաղաքացիա կան պալատի նախագահը:

Քրէաիրաւական գործերով զեկուցում է քրէական պալատի նախագահը:

**Յօդուած 99.** Բարձրագոյն Ատեանը հանդիսանում է հսկողական բարձրագոյն ատեան, որոշումները վերջնական են, բողոքարկման ենթակայ չեն:

**Յօդուած 100.** Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանն օրէնքով սահմանուած կարգով՝

1/Իրականացնում է սահմանադիր ժողովի գործառոյթ, ճանաչում է Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադրութիւնը ընդունուած.

2) Ստուգում է օրէնքների, Ազգային Ժողովի որոշումների, Պետութեան Գլխի հրամանագրերի, կառավարութեան, Վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանութիւնը Սահմանադրութեանը.

3) Մինչեւ միջազգային պայմանագրի վաւերացումը որոշում է նրանում ամրագրուած պարտաւորութիւնների համապատասխանութիւնը Սահմանադրութեանը.

4) Լուծում է հանրաքուէների արդիւնքների հետ կապուած վէճերը.

5) Լուծում է Ազգային Ժողովի նախագահի, Վարչապետի, իրաւարարների/արբիտրների, դատաւորների/ եւ պատգամաւորների ընտրութիւնների արդիւնքներով ընդունուած որոշումների հետ կապուած վէճերը.

6) Անյաղթահարելի կամ վերացած է ճանաչում Ազգային Ժողովի նախագահի, Վարչապետի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

7) Եզրակացութիւն է տալիս Ազգային Խողովի նախագահին՝ Պետութեան Գլխին, Կառավարութեանն անվստահութիւն յայտնելու, Վարչապետին պաշտօնանկ անելու հիմքերի առկայութեան մասին.

8) Եզրակացութիւն է տալիս Պետութեան Գլխի, Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահի, Վարչապետի լիազօրութիւնների կատարման անհնարինութեան մասին.

9) Եզրակացութիւն է տալիս Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի իրաւարարի/արբիտրի, դատաւորի/ լիազօրութիւնները դադարեցնելու, նրան կալանաւորելու, որպէս մեղադրեալ ներգրաւելու, ինչպէս նաեւ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատուութեան ենթարկելու հարց յարուցելու վերաբերեալ.

Քուէարկութեանը չի մասնակցում այն իրաւարարը, ում հարցը քննարկում է Ատեանում .

10) Եզրակացութիւն է տալիս համայնքի ղեկավարին պաշտօնանկ անելու հիմքերի մասին.



11) Օրենքով նախատեսուած դէպքերում որոշում է կայացնում կուսակցութեան գործունէութիւնը կասեցնելու կամ արգելելու մասին:

12) Քննում է բոլոր քաղաքացիական, վարչական եւ քրեական գործերը, որոնք բողոքարկուել են Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեան:

Գործերի քննութիւնը Սահմանադիր-Գերագոյն իրաւարար Ատեանի պալատներում իրականացում է կոլեգիալ՝ երեք դատաւորի կազմով, իսկ նախագահութիւնում՝ պալատների նախագահների եւ Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահի նախագահութեամբ:

**Յօդուած 101.** Սահմանադրութեամբ եւ Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի մասին օրենքով սահմանուած կարգով Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեան կարող են դիմել

ա/Պետաիրաւական հարցերով՝

1) Ազգային Ժողովի նախագահը՝ Պետութեան Գլուխը.

2) Պատգամաւորների առնուազն մէկ հինգերորդը.

3) Կառավարութիւնը,

4/Վարչապետը

5) Տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական

իրաւունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիւ ակտերի

Սահմանադրութեանը համապատասխանութեան հարցով.

6) Իւրաքանչիւր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկայ է վերջնական դատարանի ակտը, պետաիրաւական հարցի վերաբերեալ.

7) Դատարանները եւ Գլխաւոր Դատախազը՝ իրենց վարոյթում գտնուող կոնկրետ գործին առնչուող նորմատիւ ակտերի դրոյթների սահմանադրականութեան հարցերով.

8) Մարդու իրաւունքների պաշտպանը

9) Ազգային Ժողովի նախագահի՝ Պետութեան Գլխի, Վարչապետի, իրաւարարների եւ պատգամաւորութեան թեկնածուները:

Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանը սահմանադրական հարցերով գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայութեան դէպքում:

**Յօդուած 102.** Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանը, նաեւ, փաստի քննութիւն իրականացնող դատարան է, ուր կարող են դիմել գործով կողմ հանդիսացող իւրաքանչիւր ոք, դատական ակտի առկայութեան պայմաններում:

**Յօդուած 103.** Սահմանադիր -Գերագոյն Իրաւարար Ատեանի պալատները ընդունում են որոշումներ եւ եզրակացութիւններ՝ Սահմանադրութեամբ եւ Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի մասին օրենքով սահմանուած ժամկէտներում եւ կարգով:

Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահութեան որոշումները եւ եզրակացութիւնները ուժի մէջ են մտնում հրապարակման պահից, սակայն եռամսեայ ժամկէտում, հսկողական կարգով, կարող է բողոքարկուել Սահմանադիր-գերագոյն Իրաւարար Ատեանի Բարձրագոյն Ատեան:

**Յօդուած 104.** Ազգային Ժողովի նախագահի՝ Պետութեան Գլխի, Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահի, Վարչապետի անվտանգութիւնը եւ

սոցիալական ապահովության երաշխիքները համարժեք են;

## ԳԼՈՒԽ 6

### ԴԱՏԱԽԱՉՈՒԹԻՒՆ

**Յօդուած 105.** Արեւմտեան Հայաստան Պետութեան դատախազութիւնը միասնական կենտրոնացուած համակարգ է, որը ղեկավարում է Գլխաւոր Դատախազը:

Դատախազութիւնը՝

1) Օրէնքով նախատեսուած դէպքերում եւ կարգով յարուցում է քրեական հետապնդում.

2) Հսկողութիւն է իրականացնում նախնական քննութեան օրինականութեան նկատմամբ.

3) Դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) Պետական շահերի պաշտպանութեան հայց է յարուցում իրաւարար Ատեան, դատարան.

5) Բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները եւ որոշումները.

6) Հսկողութիւն է իրականացնում պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականութեան նկատմամբ:

Դատախազութիւնը գործում է Սահմանադրութեամբ իրեն վերապահուած լիազօրութիւնների շրջանակում՝ դատախազութեան մասին օրէնքի հիման վրայ:

**Յօդուած 106.** Գլխաւոր Դատախազի, Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի պալատների նախագահների, փոխիսօսնակի, փոխվարչապետի, ԱՀՊ Ազգային Բանկի նախագահի, Վերահսկիչ Պալատի նախագահի, մարդու իրաւունքների պաշտպանի անվտանգութիւնը, սոցիալական ապահովութեան երաշխիքները համարժեք են: Իրաւարարների, նախարարների, պատգամաւորների, մարզպետների, մայրաքաղաքի քաղաքապետի անվտանգութիւնը, սոցիալական ապահովութեան երաշխիքները համարժեք են:

## Գ Լ ՈՒ Մ 7

### ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

**Յօդուած 107.** Արեւմտեան Հայաստան Պետութեան վարչատարածքային միաւորներն են՝ մարզերը, շրջանները, քաղաքները եւ համայնքները/ աւան, գիւղ/ Մարզերը կազմուած են շրջանային, քաղաքային, աւանային եւ գիւղական համայնքներից:

**Յօդուած 108.** Մարզպետները, շրջանի ղեկավարները, քաղաքապետերն ընտրում են ուղղակի ընտրութեամբ:

Մինչեւ բնօրրան հայրենիքում հաստատուելը՝ նշանակուած են Ազգային Ժողովի նախագահի՝ Պետութեան Գլխի կողմից, Վարչապետի համաձայնութեամբ՝ 4 տարի ժամկետով:

Նրանց աշխատանքները ղեկավարում է Վարչապետը:

**Յօդուած 109.** Մարզպետը, շրջանի ղեկավարը, քաղաքապետը ձեւաւորում են իրենց

աշխատակազմը:

**Յօդուած 110.** Մարզում, շրջանում, քաղաքում ուղղակի ընտրութեամբ ընտրուում է աւագանի 20-30 ներկայացուցիչներ, որոնք կայացնում են որոշումներ՝ համապատասխան բիջէի ձեւաւորման, բաշխման եւ ծախսերի մասով: Աւագանին ընտրուում է 4 տարի ժամկետով:

**Յօդուած 111.** Համայնքներում իրականացում է տեղական ինքնակառավարում: Համայնքի սեփականութիւնը տնօրինելու, համայնքային նշանակութեան հարցեր լուծելու համար երեք տարի ժամկետով, ընտրուում են տեղական ինքնակառավարման մարմիններ. համայնքի աւագանի՝ հինգից տասնհինգ անդամով, համայնքի ղեկավար: Համայնքի ղեկավարը ձեւաւորում է իր աշխատակազմը:

**Յօդուած 112.** Համայնքի աւագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բիջէն, վերահսկում բիջէի կատարումը, օրէնքով սահմանուած կարգով սահմանում տեղական տուրքեր եւ վճարներ:

**Յօդուած 113.** Մարզերում իրականացում է պետական կառավարում, որոնք իրագործում են կառավարութեան տարածքային քաղաքականութիւնը, համակարգում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայութիւնների գործունէութիւնը:

**Յօդուած 114.** Մայրաքաղաքն ունի մարզի կարգավիճակ: Մայրաքաղաքի քաղաքապետն ընտրուում է ուղղակի ընտրութեամբ: Տեղական ինքնակառավարումը Արեւմտեան Հայաստան Պետութեան մարզերում եւ քաղաքներում իրականացում է թաղային, քաղաքային, շրջանային համայնքների համապատասխան կառոյցների միջոցով:

**Յօդուած 115.** Վարչապետի առաջարկութեամբ Վտարանդի Կառավարութիւնը կարող է պաշտօնանկ անել մարզպետներին: Մարզպետի ներկայացմամբ, Վարչապետը կարող է պաշտօնանկ անել քաղաքի, շրջանի, համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարին պաշտօնանկ անելու դէպքում Վտարանդի Կառավարութեան որոշմամբ երեսնօրեայ ժամկետում անցկացում է արտահերթ ընտրութիւն: Մինչեւ համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր պարտականութիւնների ստանձնումը, Վարչապետը նշանակում է քաղաքային, իսկ մարզպետը՝ շրջանային, աւանային, գիւղական համայնքի ղեկավարի պաշտօնակատար:

**Յօդուած 116.** Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութեան կարգը, լիազօրութիւնները սահմանուում են Սահմանադրութեամբ եւ օրէնքներով:

## ԳԼՈՒԽ 8

### ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՒ ՀԱՆՐԱՔՈՒԵՆ

**Յօդուած 117.** Սահմանադրութիւնն ընդունուում կամ դրանում փոփոխութիւններ կատարուում են հանրաքուէի միջոցով, Վտարանդի Կառավարութեան կամ Ազգային

Ժողովի նախաձեռնությամբ, պատգամաւորների մէկ երրորդ ձայների մեծամասնությամբ կամ ԱՀ ՍԳԻԱ կողմից, որպէս Սահմանադիր Ժողով:

Հանրաքուէի օրը նշանակում է Սահմանադիր- Գերագոյն Իրաւարար Ատեանի որոշմամբ, Վտարանդի Կառավարութեան, Ազգային Ժողովի պատգամաւորների ընդհանուր թուի մեծամասնութեան առաջարկով եւ համաձայնությամբ:

Ազգային Ժողովի նախագահը Սահմանադրութեան կամ դրանում փոփոխութիւններ կատարելու նախագիծը ստանալուց յետոյ, քսանմէկօրեայ ժամկետում, կարող է այն իր առարկութիւններով եւ առաջարկութիւններով վերադարձնել Վտարանդի Կառավարութիւն՝ պահանջելով նոր քննարկում:

Ազգային Ժողովի կողմից պատգամաւորների ընդհանուր թուի ձայների առնուազն երեք քարորդով վերստին առաջարկած Սահմանադրութեան կամ դրանում փոփոխութիւններ կատարելու նախագիծը Ազգային Ժողովի նախագահը հանրաքուէի է դնում Սահմանադիր - Գերագոյն Իրաւարար Ատեանի կողմից սահմանած ժամկետում:

**Յօդուած 118.** Սահմանադրաիրաւական նորմերը հանրաքուէի են դրւում Վտարանդի Կառավարութեան կամ Ազգային Ժողովի առաջարկով՝ սահմանուած կարգով: Հանրաքուէի միջոցով ընդունուած օրէնքները փոփոխւում են միայն հանրաքուէով:

**Յօդուած 119.** Հանրաքուէի դրուած նախագիծը համարւում է ընդունուած, եթէ կողմ են քուէարկել քուէարկութեան մասնակիցների երեք քարորդը, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկուած քաղաքացիների երկու երրորդը:

**Յօդուած 120.** Սահմանադրութեան 1-ից 7-րդ յօդուածները փոփոխման ենթակայ չեն:

## **ԳԼՈՒԽ 9**

### **ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՅԹՆԵՐ**

**Յօդուած 121.** Գործող Սահմանադիր-Գերագոյն Իրաւարար Ատեանի նախագահի եւ իրաւարարների/արբիտրների/ լիազօրութիւնները պահպանւում են, նրանք պաշտօնավարում են մինչեւ 75 տարին լրանալը, իսկ 75 տարին լրացած իրաւարարներին հրաժարական ներկայացնելը կամ Ատեանի կողմից աշխատանքներին մասնակցութեան անհնարիւնութեան մասին եզրակացութիւն տալը:

**Յօդուած 122.** Արեւմտեան Հայաստան Պետութեան գործող Վտարանդի Կառավարութիւնը շարունակում է իր լիազօրութիւնները մինչեւ Արեւմտեան Հայաստան Պետութեան Ազգային Ժողովի նոր ընտրութիւնները Բնօրրան Հայրենիքում:

**Յօդուած 123.** Արեւմտեան Հայաստան Պետութեան, Ազգային Ժողովը /Խորհրդարան/ մինչեւ Բնօրրան Հայրենիքում հաստատուելն ունի 39 պատգամաւոր:

**Յօդուած 124.** Սոյն Սահմանադրութիւնը անցումային է, գործում է մինչեւ Բնօրրան Հայրենիքում հաստատուելը եւ նոր Սահմանադրութեան ընդունումը :

Արեւմտեան Հայաստան Պետութեան Կառավարութեան «Վտարանդի» կարգա վիճակը պահպանւում է մինչեւ Բնօրրան Հայրենիքում հաստատուելը:

## Ծանոթություն.

1. Իրաւարար, Արբիտր, Դատաւոր, Վտարանդի Կառավարութիւն, Կառավարութիւն եզրոյթները գործածական են, ունեն համազօր նշանակութիւն:

Արեւմտեան Հայաստան Պետութեան Սահմանադիր Գերագոյն Իրաւարար Ատեանի

Նախագահ՝ Հրայր/Սուրիկ Ղազարեան



Իրաւարարներ՝  
Արմէն Խաչիկեան  
Գառնիկ Մարգարեան  
Երուանդ Մանարեան

## ՍՈՒՐԷՆ – ՀՐԱՅՐ ԲԱԽՇԻԻ ՂԱԶԱՐԵԱՆ Համահեղինակ-Իրավարար

Սուրեն-Հրայր ՂԱԶԱՐԵԱՆ, ծնեալ Գեղաշեն, Յունուար 5, 1958թ. աւարտած է Երեւանի Պետական համալսարանի Իրաւաբանական ակադեմիան, ստանալով **Իրաւագէտի** վկայագիր - 1984թ.:

**1988 – 2011թթ. Զբաղեցուցած է հետեւեալ պաշտօնները:**

- ՀՀ Ներքին Գործոց Նախարարութեան **քննիչ՝** ք. Արովեան.
- Ժողովրդական **Դատարանի Դատաւոր՝** ք. Հրազդան.
- Ժողովրդական **Դատարանի Նախագահ՝** ք. Արովեան.
- ՀՀ Վերաքննիչ **Քրեական եւ զինվորական Դատարանի Դատաւոր՝** ք. Երեւան.
- Արաբկիր և Քանաքեռ - Զէյթուն **վարչական շրջաններու դատաւոր,** ք. Երեւան.

**1988 – 2012թթ. Ընդգրկած պետական կոչումներն ու պարգևատրուած շքանշանները:**

- ԽՍՀՄ Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան հրամանագրով **« ԽՍՀՄ Զինուած Ուժերու 70 ամեակ » մետալ.**
- ԽՍՀՄ Ներքին Գործոց նախարարի հրամանագրով **քաղաքագործի մէջ գերազանց ծառայութեան համար կրծքանշան.**

- Արցախի Երկրապահ Կամաւորներու Միութեան « Մայրական երախտիք Արցախի քաջորդուն » մետալ.
- Հայ-Նորվեգական Խորհուրդի որոշմամբ՝ **Ֆ. Նանսէնի ոսկեայ յուշամետալ.**
- ՀՀ Երկրապահ Կամաւորներու Միութեան, **Սպարապետ Վազգէն ՍԱՐԳՍԵԱՆ շքանշան.**
- ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան, **Վազգէն ՍԱՐԳՍԵԱՆ մետալ.**
- ՀՀ Նախագահի հրամանագրով, **Սարտական ծառայութեան համար մետալ.**
- ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան « **ՀՀ Զինուած Ուժերու 20 ամեակ** » մետալ:

**Կարեւոր նշում.**

ՀՀ Նախագահի 10 Մարտի 1999թ. Թիւ ԶՆ-244 հրամանագրով շնորհուած է, դատաւորի որակաւորման երրորդ դասակարգային աստիճան:

Սոյն տարուայ Մայիսի 12-էն շնորհուած է **ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՏԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ**՝ դեկտեմբերի 23-ին՝ „ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ,,ԻՐԱՎԱՐԱՐԻ դասային աստիճան եւ ԱՀՊ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՎՈՐ-ԳԵՆԵՐԱԼ կոչում, համաձայն Արեւմտեան Հայաստան Պետության Վտարանդի Կառավարութեան ՈՐՈՇՄԱՆ:

Սուրէն-Հրայր ՂԱԶԱՐԵԱՆ անդամ է Ռուսաստանի բնական գիտութիւններու արտասահմանեան ակադեմիայի. Հրապարակած է մասնագիտական եւ իրաւական բազում յօդուածներ, առաւել 2 գրքերու հեղինակ:  
Գալիֆորնիոյ « Հայ գրողներու միութեան » անդամ է:

Կարճ ժամանակէ ի վեր կը բնակի ԱՄՆ, որտեղ կը գործէ իբրեւ **ԱՀՎԿ ՎԿ ԱԳ նախարարութեան հաւատարմատար եւ արտակարգ դեսպանորդ**, միաժամանակ Արեւմտեան աշխարհամասի երկրներու համար, սեպտեմբեր 2013-էն:  
2014թ. Մարտ 25-էն կը վարէ **ԱՀՀ Արդարադատութեան նախարարի** պաշտօնը:  
2014թ. Հոկտեմբերի 10-էն կը վարէ ԱՀՊ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ-ԳԵՐԱԳՈՅՆ ԻՐԱՎԱՐԱՐ ԱՏԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ պաշտօնը:

**Արմեն Էմիլի Խաչիկյան** Իրավաբար

Պատմական գիտությունների թեկնածու (1988), դոցենտ (1991): Հեղինակ է *«Армения в сфере международной политики накануне и в начале нашей эры»* (1999 г.), *«История Армении: краткий очерк»* (2009 г.), *«Նախագահ Վ. Վիլսոնի Հայաստանի սահմանների քարտեզը»* (2010 թ., հայերեն-անգլերեն), *«History of Armenia: a brief review»* (2010), պատմության տարբեր հարցերի շուրջ քսանից ավելի գիտական հովդածների և մեթոդական ուղեցույցների՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

1996թ. 8 ամիս վերապատրաստվել է Աթենքի ազգային պետական համալսարանում, 2003 թ. մարտից-նոյեմբեր Ֆուլբրայթյան կրթաթոշակով գիտահետազոտական աշխատանք է կատարել ԱՄՆ Կոնգրեսի գրադարանում և Ազգային արխիվում: Դասավանդել է Հայկական պետական մանկավարժական համալսարանում, Հայաստանի Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայում, Հայաստանի Ֆրանսիական համալսարանում: Ներկայումս Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի դոցենտ է:

Երկար տարիներ զբաղվել է պատմության գծով դպրոցական դասագրքերի և

ուսումնա-մեթոդական ծրագրերի ստեղծման հարցերով: Հանդիսացել է Համաշխարհային պատմության գծով ազգային դպրոցական դասագրքերի և ուսումնական ծրագրերի գծով հետզոտական խմբի անդամ: Համահեղինակն է «Հին աշխարհի պատմություն» (գործել է 2000-2008 թթ.), «Քաղաքացիական կրթություն» հեռավար ուսուցմամբ (գործել է 2000-2002 թթ.) դպրոցական դասագրքերի:

Հայաստանի Ֆուլբրայթյան գիտնականների Ասոցիացիայի կրթական ծրագրերի գծով փորձագետն է: Մասնակցել է դպրոցականից մինչև բուհական ուսուցման մանկավարժական խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովների, սեմինարների և գիտագործնական քննարկումների Բելգիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Հունգարիայում, Լիտվայում, Նորվեգիայում, Շվեյցարիայում, Մեծ Բրիտանիայում, Մոնղոլիայում, Ուկրաինայում, Վրաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Ֆրանսիայում:

## **ԱՐԱՍ ՍԵՅՐԱՆԻ ՄԿՐՏՉԵԱՆ** **Համահեղինակ**

Ծնեալ 1960 թուականին՝ Երևան, Արամ ՄԿՐՏՉԵԱՆ ուսուցիչ ծնողաց զուակներեն է՝ արմատներով Արեւմտեան Հայաստանի Ալաշկերտ գաւառէն:

1981 – 88թթ. Տարիները Սովետական բանակէն զօրացրուելէ ետք կը յատկանշուին բարձրագոյն ուսումնական ժամանակաշրջանով:

Վ. Պրիստովի անուան կաճառի Ռուսական բանասիրական բաժինը:

Երեւանի Պետական Համալսարանի Աթէիզմի ամպիոնը:

Ազգաբանական եւ կրօնական ոլորտներու վերաբերեալ ունի շարք մը ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

1989թ. Կը հիմնէ «Գանձակ» համագործակցութիւնը (coopérative), որ հիմք կը կազմէ «Փրօկրէս» համամիութենական Գիտա-արտադրական ընկերութեան մասնաճիւղի ստեղծման Հայաստանի մէջ, որտեղ պաշտօնավարած է իբրեւ տնօրէն մինչեւ ԽՍՀՄ լուծուիլը:

1993 – 99թթ. Մոսկուա հաստատուելով կը շարունակէ իր գործունէութիւնը, ապա կը հիմնէ «Եունիվըր Սերվիս» շինարարական ընկերութիւնը, հանդիսանալով գլխաւոր պատուիրատուն:

2000թ. Ռուսաստանի Հայերու Միութեան առաջին համագումարի պատգամաւոր կը դառնայ: Նոյն տարուրնէ կը սկսի զբաղիլ Արեւմտեան Հայաստանի հիմնախնդիրներով:

2002թ. Պետլինի մէջ սեփականատերը եղած է «ԱՍ Եունիվըր» – «AM JUNIVER» ընկերութեան, սակայն միեւնոյն ժամանակ չէ դադրած մշակութային գործունէութիւն ծաւալելէ Գերմանիոյ մէջ:

2004թ. Տիկնոջ՝ Կարինէ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ հետ հիմնած է Մայնց քաղաքի հայկական շաբաթօրեայ դպրոցը:

2005թ. Վիսպատէնի «Հայ-Գերմանական մշակութային կեդրոնը», զուգահեռ շարունակելով իրականացնելու Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւն հոչակելու ծրագիրը:

Այդ առնչությամբ համագործակցած է ԱՄՆ գործող «Լոյս Աշխարհ» հաղորդաշարի հեղինակ Ս. ՔԻՐԵՄԻՉԵԱՆԻ հետ:

2010թ. Աշխատանքային համագործակցություն կ' ունենայ Փարիզեան «Հայ Ազգային Խորհուրդ» հասարակական ընկերակցության նախագահ Ա. Արբահամեանի հետ, հետագային անդամ դառնալով այդ կառույցի անուան տակ կեանքի կոչուած Իրաւաբանական Յանձնախումբին:

2011թ. Փետրուար 4-ին Փարիզի մէջ հոչակուած Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան կազմութեան գաղափարի համահիմնադիրն է: Ապա Կառավարութեան կազմութեան վերաբերեալ Հոչակագրի հեղինակը, իսկ հետագային Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան դրօշի գաղափարաստեղծողը:

2013թ. կ'ընտրուի Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւոր:

2014թ. Կառավարութեան մէջ ստանձնած աշխատանքի հետ կապուած կը հրաժարի պատգամաւորական պաշտօնէն, ինչպէս եւ Հայ Ազգային Խորհուրդի ու Իրաւաբանական Յանձնախումբի անդամակցութենէն:

Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան մէջ զբաղեցուցած պաշտօնները՝

1-Արտաքին Գործերու Յանձնաժողովի պատասխանատու, 2011-2014թթ.,

2- Արտաքին Գործոց Նախարար, յունուար 2014թ. Մինչեւ յուլիս 2014թ.,

3- ԱՀՎ Կառավարութեան գործող վարչապետ:

4--2014թուականի դեկտեմբերի 23-ին Շնորհուել է «ԲԱՐՁՐԱԳՈՅՆ» դասի ՊԱՏՈՒԱԻՈՐ-ԻՐԱՎԱՐԱՐԻ դասային աստիճան:

**Հրապարակած ուսումնասիրություններն են.**

«ԷԶՈԹԵՐԻԿՈՍ»

«4500- ԱՄԵԱՅ ՏՈՄԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՈՒՐԶ»

«Իլիականը» ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ. ՀՄԿԱՅՆԵՐ

ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԷՍ ԴԱԻԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԼԽԱԻՈՐ ԵՐԵՒՈՅԹ

«Արեւապաշտական Տիեզերաշինություն» (<http://www.iranahayer.com/>, 21/01.2009թ.)

«Հայկական ԱՅԲՈՒԲԵՆԸ ՎԻՒՐՅԲՈՒՐԳԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԴՂԵԱԿԻ ՄԷՉ» (<http://www.eutyun.am/>, 04/06.2008թ.)

«Պատմական ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԷՍ ՎԵՐԷԹՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ Կ'ենտրոն (հատուած մենագրությունից)

«Իլիականը ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ Մշակոյթը» («Արեւորդոց Խորհրդանշանները», հատուած)

«4500-ամեայ ՏՈՄԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Շուրջէ» (<http://www.iranahayer.com/>, 05/09.2008թ.)

«Քարահունջի Առեղծուածը» (<http://www.armedia.am/>, 13/11.2008թ.)

«Լուսաւորչականություն» եւ բազմաթիվ այլ գիտական աշխատանքներ:

## **ԿԱՐԻՆԷ ՊԱՐԳԵԻԻ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ Համահեղինակ**

Ծնեալ 1961թ., Կարինէ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ արմատներով Խոյեցի,



Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Կրթութեան եւ Գիտութեան նախարարն է:

1977-1980թթ. Ուսանած է Երեւանի Խ. Աբովեան անուան Մանկավարժական Համալսարանի Բանասիրական ֆաժանմունքը:

1980-1990թթ. Տարիներուն աշխատած է Գեղաշենի միջնակարգ դպրոցը, որպէս հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի:

1990 թուականի սեպտեմբերէն մինչեւ 1993 թուականի օգոստոս ամիսը աշխատած է Աբովեան քաղաքի Ռուս-հայ բարեկամութեան թանգարանը, որպէս գիտաշխատող:

1993 թուականին ընտանեօք կը տեղափոխուի Մոսկուա, ուր կը զբաղի իրենց 4 երեխաներուն հայեցի կրթութեամբ ու դաստիարակութեամբ:

2001 թուականին կը տեղափոխուին Գերմանիա:

2003 թուականէն մինչեւ 2009 թուականը հասարակական հիմունքներով աշխատած է **Մայնցի Թերեզեանի անուան գիմնագիայի գրադարանը:**

2003-2012թթ. Եղած է Մայնցի Համայնքի Վարչութեան անդամ:  
Հիմնական նպատակը եղած է երես առ երես շփուելու տարագիր **հայոց շատաւիղի** հետ: Մօտէն ծանօթանալու եւ ուսումնասիրելու Արեւմտեան Հայաստանի ցեղասպանուած **հայոց ժառանգորդ՝ այդ սերունդի ուժացման առկայ խնդիրները:** Հայոց լեզուի՝ Արեւմտեան եւ Արեւելեան լեզուներու տարանջատման խնդիրը, նաեւ Հայ մշակոյթի գլխաւոր խնդիրները:

2004-2012թթ. Ամուսնոյն՝ Արամ ՄԿՐՏՉԵԱՆԻ հետ հիմնադրած է Մայնցի Հայ համայնքի հայկական շաբաթօրեայ դպրոցը: Կազմակերպած է դպրոցի աշխատանքները, ուսուցանած Հայոց Լեզու, Հայ Մշակոյթ, եւ արժանացած ՀՀ դեսպանատան Շնորհակալական Խօսքին:

2005-2012թթ. Արամ ՄԿՐՏՉԵԱՆԻ հետ հիմնած է Վիսբադէնի «Երեւան - Հայ-Գերմանական մշակութային կենտրոնը»:

Այնուհետեւ, 2005թ. Արամ Մկրտչեանի հետ համատեղ իրականացուցած է Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան հոշակման ծրագրի կազմակերպումը:

2009թ. Հայապահպանության ծրագրի ընդմէջ, համագործակցած է ԱՄՆ գործող «Լոյս Աշխարհ» հաղորդաշարի հեղինակ Ս. Քիրեմիջեանի հետ:

2010թ. Կը սկսի համագործակցիլ Արեւմտեան Հայաստանի «Հայ Ազգային Խորհուրդ» հասարակական ընկերակցութեան նախագահ՝ Ա. Աբրահամեանի հետ: Անդամ եղած է նոյն ընկերակցութեան, ապա այդ ծիրէն ներս կազմուած Իրաւաբանական Յանձնախումբին:

Կը հանդիսանայ՝

2011թ. Փետրուար 4-ին Փարիզի մէջ հռչակուած Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան հիմնադիր անդամ:

2013թ. Ընտրուած է Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր:

2014թ. Կառավարութեան մէջ ստանձնած աշխատանքի հետ կապուած, հրաժարած է պատգամաւորական պաշտօնէն, ինչպէս եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի եւ Իրաւաբանական Յանձնախումբի անդամակցութենէն:

Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան մէջ զբաղեցուցած է հետեւեալ պաշտօնները:

1- 2011-2014թթ. Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Կրթութեան ու Գիտութեան Յանձնաժողովի պատասխանատու,

2- Յունուար 2014թ. Առ այսօր Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Կրթութեան ու Գիտութեան Նախարար:

2014 թուական 23 դեկտեմբեր ՇՆՈՐՀՈՒԵԼ է «ԱՌԱՋԻՆ» դասի ԻՐԱՎԱՐԱՐՈՒ ԴԱՍԱՅԻՆ աստիճան եւ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ» կոչում:

Հրապարակած ուսումնասիրութիւններէն եւ ստեղծագործութիւններէն են :

2009-2014թթ. Համացանցով հրապարակուած նիւթեր՝ նուիրուած Հայ Մշակոյթին: Տպագրուած են հայոց վեպի չորրորդ ճիւղի շարք մը պատումներ, «Ձարթնի՛ր» 2010 մայիսի 28, գոր հիմք դրաւ Կառավարութեան Վերածնունդին, «Միեր Դուրս եկաւ Ագռաւաքարէն», «Մարէի Միերի զրոյցները», «Դաւիթ ու Միեր», «Նաւասարդ»ի շարք մը պատումներ, ելլն:

Հայ ժողովուրդի հոգեւոր եւ մշակութային ժառանգութեանը նուիրուած նիւթեր՝ «ՏԼԷ ԵԱՄԱՆ Սասունցի Դաւթի եւ Խանդութի Խանումի սիրոյ պատմութեան երգը»:

Հայկական ծիսական պարերու շարք՝ «Կեոնդ», «Ռազմական պար՝ Եար Խուշ տի», «Իշխանաց պար», Շէյխանի», «Ռուս Տամ Պագի», «Ուզունդարա», ելլն:

Մշակութային միջազգային ասպարեզի վրայ հեղինակային իրաւունքի հաստատման խնդրոյ շուրջ՝ «Լաւաշը՝ Հայկական հացատեսակ», «Երդիկ», «Զատիկ», «Կամփո», «Վանայ Կատուն», ելլն:

Ներկայացուցած է նախագիծ՝ Հայոց լեզուի միասնական ուղղագրութեան շուրջ:

Հրապարակած է շարք մը գաղափարախօսական աշխատանքներ, անդրադառնալով խնդրայարոյց մշակութային հարցերուն:

[https://www.youtube.com/watch?v=Cd\\_5TXNDmZE](https://www.youtube.com/watch?v=Cd_5TXNDmZE)

Հայոց լեզուի միասնական ուղղագրութեան նախագիծ

<https://www.youtube.com/watch?v=rGrFd2Ib3tà>

Իրաւական եզրաքառերու մասին Նախագիծ

<https://www.youtube.com/watch?v=27W-sy20gvE>

Ռազմական պար՝ Եար Խուշ Տի

<https://www.youtube.com/watch?v=GgnFcxaopa8>

Ռուս Տամ Բագի

